Իրավահեն կլիմայական հարմարվողականության խթանումը Հայաստանի տնտեսության ջրային ոլորտում

RAOUL WALLENBERG INSTITUTE

LUND UNIVERSITY

Սեպտեմբեր 2025

Իրավահեն կլիմայական հարմարվողականության խթանումը Հայաստանի տնտեսության ջրային ոլորտում

Ջրի իրավունք

Հեղինակներ. Սիլվա Այվազյան[1], Արմինե Չախալյան,[2] Մարի Չաքրյան,[3] Զարուհի Ղարագյոզյան,[4] Օլիմպիա Գեղամյան,[5] Անուշ Լոքյան,[6] Լիլիթ Մինասյան,[7] Նունուֆար Ստեփանյան,[8] Արփինե Սուքիասյան,[9] Անի Եղիկյան[10]

Copyright: RWI

Publication design by RWI.

Այս հետազոտության մեջ արտահայտված տեսակետներն ու կարծիքները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտացոլեն RWI-ի կամ Լունդի համալսարանի տեսակետները

Supported by: Swedish Institute

[1] «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ
[2] Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
[3] Շրջակա միջավայրի նախարարություն
[4] Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության (ՀՎԷԷ) հիմնադրամ/R2E2/
[5] Երևանի պետական համալսարան
[6] «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ
[7] Ներքին գործերի նախարարություն
[8] «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ
[9] Հանրային իրազեկման և մոնիթորինգի կենտրոն
[10] Ներքին գործերի նախարարություն

Համառոտագիր 4

1. Ներածություն. ջրի իրավունքին սպառնացող փոխկապակցված մարտահրավերները Հայաստանում 5

2. Իրավահեն և գենդերային հավասարության ապահովման վրա հիմնված մոտեցում 7

3. Ջրի իրավունք 8

Սակավաջրությանը նպաստող գործոնները Հայաստանում 10

Երաշտ և կլիմայի ազդեցության ընդլայնում 10

Ենթակառուցվածքային խնդիրներ 11

Մրցակցային առաջնահերթություններ 12

Ջրի աղտոտում 13

Ազդեցություններ 14

Գյուղատնտեսական արտադրողականության նվազում 14

Գյուղատնտեսությունից և գյուղական կենսամիջոցներից հրաժարում 14

Սոցիալական վեճեր տարբեր ջրօգտագործողների միջև 15

Առողջության վրա բացասական ազդեցություն 15

Տարաչափ ազդեցություններ 15

Ջրի իրավունքը միջազգայնորեն ճանաչված մարդու հիմնարար իրավունք է: Չնայած Հայաստանում այն դեռևս չի ճանաչվել որպես կիրառելի իրավունք, սակայն տարբեր օրենքներ, քաղաքականություններ և ռազմավարական ծրագրեր նպաստում են ջրի իրավունքի ապահովումը երեք ասպեկտներով՝ մատչելիություն, հասանելիություն, որակ: Լրացուցիչ հարցերը քննարկվում են «Այլ» բաժնում: 17

Հանրային մասնակցություն 25

Օրհուս կենտրոնը որպես մասնակցային հարթակ 26

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացակարգեր 28

Եզրակացություն 28

5. Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման հիմնական դերակատարներն ու նախաձեռնությունները 29

Ջրային ռեսուրսների կառավարմանը նպաստող այլ ներդրումներ 33

6. Եզրակացություններ և առաջարկություններ 35

Կառավարման համակարգեր և կառուցվածքներ 39

Համառոտագիր

Զեկույցում ներկայացված է մարդու իրավունքների և կլիմայական հարմարվողականության փոխկապակցվածությունը Հայաստանում ՝ հատկապես ջրային ռեսուրսների կառավարման համատեքստում: Քանի որ Հայաստանը կանգնած է կլիմայական փոփոխությունների աճող մարտահրավերների առջև, այդ թվում՝ ջերմաստիճանի բարձրացման, տեղումների օրինաչափությունների խախտման և ջրային պաշարների սակավացման, հարմարվողականությունը դառնում է ոչ միայն բնապահպանական խնդիրների լուծման անհրաժեշտ միջոց, այլև մարդու իրավունքների ապահովման հիմնարար խնդիր:

Իրավահեն մոտեցմամբ կազմված այս զեկույցը ջրի իրավունքի հիմնական բաղադրիչները՝ հասանելիություն, մատչելիություն և որակ, դիտարկում է որպես մարդու իրավունքների անբաժան մաս: Այս տարրերը, այլ որպես Հայաստանի կողմից ստանձնած իրավական պարտավորություններ, որոնք բխում են միջազգային իրավունքի նորմերից, մասնավորապես՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրից:

Զեկույցը հիմնված է ապացույցների համադրման, իրավական վերլուծության և պարտականություններ կրող կողմերի դիտարկումների վրա՝ ցույց տալու, թե ինչպես է կլիմայական փոփոխություններով պայմանավորված սակավաջրությունը վտանգում ջրի իրավունքը բնակչության մի մեծ հատվածի համար, հատկապես այն խմբերի, որոնք արդեն իսկ շրջակա միջավայրում խոցելի են և մեկուսացված: Գյուղական շրջաններում անվտանգ և բավարար քանակությամբ ջրի հասանելիությունը մնում է անկայուն՝ պայմանավորված ենթակառուցվածքների ոչ բավարար առկայությամբ, թույլ վերահսկողությամբ և կանոնակարգող մեխանիզմների անհամաչափ անհավասար կիրառմամբ:

Զեկույցի գլխավոր թեմաներից մեկը խտրականության արգելքի պարտավորության ուսումնասիրությունն է կլիմայի հարմարվողականության քաղաքականության և պրակտիկայի համատեքստում, ինչը հաճախ ձևակերպվում է Կայուն զարգացման նպատակների լեզվով՝ «ոչ ոք չպետք է մնա ստվերում» սկզբունքով: Վերլուծությունը շեշտում է, որ արդյունավետ հարմարվողականությունը պետք է կանխամտածված ձևով հաշվի առնի տարբեր խմբերի, այդ թվում՝ կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, անապահով ընտանիքների և գյուղական համայնքների վիճակը, որոնց խոցելիությունը խտրականության փոխկապակցված ձևերի ազդեցության արդյունք է: Հարմարվողականության միջոցառումները, որոնք չեն հիմնվում այս ըմբռնման վրա, կարող են խորացնել անհավասարությունը և անբավարար ենթակառուցվածքային հնարավորությունները:

Զեկույցը նաև ընդգծում է համապարփակ կառավարման, որոշումների ընդունման թափանցիկության և հանրային մասնակցության կարևորությունը՝ որպես իրավունքների վրա հիմնված հարմարվողականության հիմնարար տարր: Այս սկզբունքները ոչ միայն ընթացակարգային երաշխիքներ են, այլև հստակ ճանապարհներ՝ արդար և դիմակայուն ջրային համակարգեր ստեղծելու համար:

Կլիմայի փոփոխության հարմարվողականության հարցը դիտարկելով մարդու իրավունքների տեսանկյունից՝ զեկույցը հիմք է ստեղծում այնպիսի քաղաքական մոտեցումների համար, որոնք իրավական առումով հիմնավորված են, սոցիալապես ներառական և էկոլոգիապես կայուն։ Եզրակացության մեջ նշվում է, որ մարդու իրավունքների ինտեգրումը ջրային ռեսուրսների կառավարման մեջ ոչ միայն նորմատիվային հրամայական է, այլև կենսական նշանակություն ունի կլիմայի փոփոխության նկատմամբ արդարացի դիմակայունություն ձևավորելու համար։

1. Ներածություն. ջրի իրավունքին սպառնացող փոխկապակցված մարտահրավերները Հայաստանում

Ջրի հասանելիությունը Հայաստանում լուրջ սպառնալիքի տակ է, ինչը պայմանավորված է մի շարք բնական, ենթակառուցվածքային և կառավարչական խնդիրներով, այդ թվում՝

- կլիմայական փոփոխություններով պայմանավորված երաշտներ,
- ջրատար համակարգերի վատթարացած վիճակ,
- տնային տնտեսությունների, գյուղատնտեսության և արդյունաբերության միջև ջրի պահանջարկի մրցակցություն,
- աղտոտվածություն,
- թույլ կառավարում և կարգավորող թերի ընթացակարգեր։

Այս մարտահրավերները խաթարում են ջրի իրավունքին առնչվող ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի կողմից ճանաչված բոլոր երեք բաղադրիչները՝ հասանելիություն, մատչելիություն և որակ։

Թեև Հայաստանը հարուստ է քաղցրահամ ջրի պաշարներով, սակայն աշխարհագրական և սոցիալական անհավասարության հետևանքով բազմաթիվ շրջաններ, հատկապես՝ գյուղական և լեռնային, ունեն անկանոն կամ ոչ անվտանգ ջրի հասանելիություն։ Սակավաջրությունը, այսինքն՝ իրավիճակ, որի արդյունքում վատթարանում են ջրային ռեսուրսների պահանջարկի ապահովման պայմանները, պայմանավորված է ոչ միայն ֆիզիկական սակավությամբ, այլ նաև աղտոտվածությամբ, ինչը նույնիսկ հասանելի աղբյուրները դարձնում է անօգտագործելի։

Սակավաջրությունից բխող հետևանքները բոլորի վրա հավասարապես չեն ազդում։ Խոցելիությունը ձևավորվում է ըստ աշխարհագրական դիրքի, եկամուտների, սեռի, հաշմանդամության կարգի և տարիքի։

- Գյուղական համայնքների զգալի մասը կանգնած է մշտական ջրի պակասի խնդրի առաջ՝ հին (մաշված) կամ բացակայող ենթակառուցվածքների պատճառով։
- Քաղաքային առավել անապահով թաղամասերում հաճախ լինում են ծառայության ընդհատումներ և մատակարարվում է ցածր որակի ջուր։

- Կանայք և աղջիկները կրում են անհամաչափ բեռ՝ ծախսելով շատ ժամանակ տնային տնտեսությունում ջրային կարիքները բավարարելու համար՝ կրթության ստացման և աշխատանքի հնարավորությունների հաշվին:
- Գյուղատնտեսությամբ զբաղվող տղամարդիկ տնտեսական կորուստներ են կրում ոռոգման ջրի պակասի և երաշտների հետևանքով բերքատվության նվազման պատճառով:
- Տարեց և հաշմանդամություն ունեցող մարդիկ, հատկապես՝ հեռավոր գյուղերում, բախվում են ավելի մեծ դժվարությունների՝ այլընտրանքային ջրային աղբյուրներ ձեռք բերելու խնդիրների հարցում:
- Որոշ համայնքներում ջրի պակասը հանգեցնում է անբավարար սանիտարա-հիգիենիկ պայմանների, որոնք բացասաբար են ազդում առողջության և բարեկեցության վրա:

Սոցիալական նորմերը ևս ավելի են խորացնում գենդերային խոցելիությունը, հատկապես երաշտների կամ ջրհեղեղների ժամանակ, երբ ջրի պակասն ու աղտոտվածությունը մեծացնում են կանանց պատասխանատվությունը ընտանիքի անդամների խնամքի և տնային հոգսերի նկատմամբ:

Չնայած համապարփակ իրավական և քաղաքական շրջանակի առկայությանը՝ Հայաստանի հիմնական մարտահրավերը մնում է դրա իրականացումը: Արդյունավետ կառավարումը պահանջում է ոչ միայն ուժեղ հանրային կառույցներ, այլև քաղաքացիական հասարակության, տեղական համայնքների և այլ շահագրգիռ կողմերի զգալի մասնակցություն: Բազմաշահառու, թափանցիկ և հաշվետու ջրային կառավարման համակարգը կենսական նշանակություն ունի դիմակայունության ամրապնդման և բոլորի ջրի իրավունքի պաշտպանության համար:

Այս զեկույցում ուսումնասիրվում է, թե ինչպես է կլիմայի փոփոխությունը ազդում ջրից օգտվելու իրավունքի վրա Հայաստանում: Այն ընդգծում է մարդածին ազդեցությունները, վերլուծում է ազգային և միջազգային իրավական շրջանակները և գնահատում ինստիտուցիոնալ արձագանքման կարողությունները: Հատուկ ուշադրություն է դարձվում տեղեկատվության հասանելիության, հանրային մասնակցության և վեճերի լուծման մեխանիզմներին:

Այսպիսով, զեկույցը բացահայտում է Հայաստանում կլիմայի փոփոխության նկատմամբ իրավունքների վրա հիմնված հարմարվողականության օրակարգի առաջխաղացման հիմնական մարտահրավերներն ու հնարավորությունները: Այն կոչ է անում բարելավել կառավարումը և խթանել ընդգրկուն համայնքային մասնակցությունը: Նկարագրելով մարտահրավերները, մատնանշելով առկա նախաձեռնությունները և համապատասխան դերակատարներին՝ զեկույցը նպատակ ունի խթանել նոր նախաձեռնություններ՝ արձագանքելու երկրի առաջ ծառացած սակավաջրության սոցիալական և բնապահպանական աճող մարտահրավերներին:

2. Իրավահեն և գենդերային հավասարության ապահովման վրա հիմնված մոտեցում

Այս զեկույցը մշակվել է Շվեդական ինստիտուտի կողմից աջակցվող Հանրային հատվածի նորարարության ծրագրի շրջանակներում: Նախագիծը ներառել է թե՛ առկա, թե՛ առցանց ձևաչափով անցկացված ուսուցողական հանդիպումներ ու քննարկումներ, որոնք հիմնված են Մարդու իրավունքների և գենդերային հավասարության ինտեգրման շրջանակային մեթոդաբանության (FIRE) վրա: FIRE շրջանակը ինտեգրում է մարդու իրավունքների միջազգային չափորոշիչներն ու ուղեցույցները, ինչպես նաև գենդերային հավասարության ասպեկտները չորս չափորոշիչներում.

1) հիմնարար իրավունքներ և հավասարություն:
2) ազդեցություն, խոցելիություն և կարողություններ:
3) տեղեկատվության մատչելիություն, հանրային մասնակցություն և արդարադատության մատչելիություն:
4) կառավարման համակարգեր և մարմիններ:

Յուրաքանչյուր չափորոշիչի շրջանակում ընդգծվում են մի շարք առանձնահատուկ բաղադրիչներ: Այս չորս չափորոշիչներն ու համապատասխան տարրերը ներկայացված են նկար 1-ում:

FIRE-ի մեթոդաբանության մասին առավել մանրամասն տեղեկատվություն կարելի է գտնել Ռաուլ Վալլենբերգի ինստիտուտի պաշտոնական կայքում՝ https://rwi.lu.se/fire/:



Նկ. 1. FIRE-ի մեթոդաբանության շրջանակը:

Այս զեկույցը մշակվել է մի շարք հիմնարար առաջադրանքների հիման վրա, որոնք հիմնվել են FIRE շրջանակի բաղադրիչների վրա՝ հատկապես կենտրոնանալով ջրի իրավունքի վրա աղետների և կլիմայի փոփոխության համատեքստում: Զեկույցի կառուցվածքն արտացոլում է ջրի իրավունքի հիմնական տարրերը, մասնավորապես՝ դրա մատչելիությունը (ֆիզիկական և ֆինանսական իմաստով) և որակը: Ներկայացված են նաև առնչվող կառավարման համակարգերն ու կառույցները, ինչպես նաև ներգրավված դերակատարների շրջանակը:

Կարևոր է ընդգծել, որ այս զեկույցն ավելի շատ արտացոլում է բուն ուսուցողական գործընթաց, ոչ թե խիստ գիտական կամ գործնական վերլուծություն: Այն հիմնված է մասնակիցների համատեղ գիտելիքների ու հսկայական փորձի վրա, բայց միևնույն ժամանակ հստակ ցույց է տալիս, որ անհրաժեշտ է իրականացնել ավելի խորքային և մասնակցային հետազոտություններ՝ ներկայացված գործընթացներն ու դինամիկան ավելի լավ ուսումնասիրելու և հասկանալու համար:

3. Ջրի իրավունք

Հայաստանի սակավաջրության ուսումնասիրությունը հիմնված է, մասնավորապես, Ջրի իրավունքի մասին թիվ 15 համընդհանուր մեկնաբանության վրա (այսուհետ՝ Համընդհանուր մեկնաբանություն թիվ 15)[11]: 2002 թվականին ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն ընդունեց Համընդհանուր մեկնաբանություն թիվ 15-ը, որով հաստատվեց, որ ջրի իրավունքը տնտեսական, սոցիալական և մշակութային միջազգային իրավունքների պայմանագրից (ICESCR) բխող հիմնարար իրավունք է, որը ոչ միայն անհրաժեշտ է գոյատևման համար, այլև հիմք է հանդիսանում արժանապատիվ կյանքի և մարդու մյուս իրավունքների, այդ թվում՝ առողջության, սննդի, բնակության և համապատասխան կենսամակարդակի ապահովման, իրականացման համար:

Ըստ էության, ջրի իրավունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալու անձնական ու կենցաղային օգտագործման համար անվտանգ, ֆիզիկապես հասանելի, ընդունելի, բավարար քանակությամբ մատչելի ջուր: Համընդհանուր մեկնաբանություն թիվ 15-ը պարզաբանում է այս իրավունքի նվազագույն հիմնական բովանդակությունը երեք փոխկապակցված չափորոշիչների միջոցով՝ հասանելիություն, մատչելիություն և որակ:

Ջուրը, նախ և առաջ, պետք է **հասանելի լինի** բավարար քանակությամբ՝ առօրյա կարիքները հոգալու, այդ թվում՝ խմելու և սնունդ պատրաստելու, սանիտարա-հիգիենիկ պայմաններն ապահովելու համար: Թեև կոնկրետ չափաբաժինները կարող են փոփոխվել կախված իրավիճակից, սակայն սկզբունքը մնում է այն, որ յուրաքանչյուր անձ ունի կանոնավոր և բավարար ջրամատակարարման իրավունք, որը հնարավորություն կտա պահպանել առողջությունը և բարեկեցությունը:

Մատչելիությունը նույնքան կարևոր է և ընդգրկում է չորս ուղղություն: Ֆիզիկապես ջուրը պետք է լինի անվտանգ հեռավորության վրա բոլորի, մասնավորապես՝ խոցելի

[11] https://www.refworld.org/legal/general/cescr/2003/en/39347

խմբերի համար, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող անձինք, երեխաները, տարեցները և չգրանցված բնակիչները չհաշվառված բնակավայրերում կամ գյուղական վայրերում բնակվողները: Տնտեսապես ջուրը պետք է լինի մատչելի. գինը չպետք է խոչընդոտի հասանելիությունը, ինչպես նաև չպետք է խաթարի այլ կարևոր կարիքների բավարարումը, ինչպիսիք են սնունդը կամ բնակությունը: Մատչելիությունը ներառում է նաև տեղեկատվություն ստանալու իրավունքը. մարդիկ պետք է ունենան ջրի աղբյուրների, որակի և կառավարման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն: Առավել կարևոր է, որ ջրի մատչելիությունն ապահովվի առանց խտրականության: Ակնհայտորեն ո՛չ օրենքը, ո՛չ էլ պրակտիկան չպետք է բացառեն որևէ մեկին՝ ռասսայի, սեռի, եկամտի մակարդակի, բնակության կարգավիճակի կամ որևէ այլ կարգավիճակի հիման վրա:

Այս չափանիշների հետ սերտորեն կապված է ջրի բավարար **որակի** պահանջը: Սա նշանակում է, որ այն պետք է անվտանգ լինի խմելու համար և զերծ լինի առողջության համար վտանգավոր վնասակար աղտոտիչներից: Ջուրը պետք է լինի նաև ընդունելի՝ համի, հոտի և արտաքին տեսքի առումով՝ հաշվի առնելով մշակութային և տեղային համապատասխանությունը:

Համընդհանուր մեկնաբանություն թիվ 15-ում հիմնական շեշտադրումը կատարվում է խտրականության բացառման և հավասարության վրա: Պետությունները պարտավոր են առաջնահերթությունը տալ մեկուսացած և բարձր խոցելիության խմբերի անձանց կարիքներին, բայց չսահմանափակվել միայն կանանց, երեխաների, փախստականների, տեղահանված անձանց, բնիկ ժողովուրդների և գյուղական բնակավայրերի կամ չգրանցված բնակիչների կարիքներով: Հավասարությունը պետք է ապահովվի թե՛ ֆորմալ (օրենսդրությամբ), թե՛ բովանդակային առումով (գործնականում)՝ միջոցներ ձեռնարկելով մատչելիության/հասանելիության համակարգային խոչընդոտները վերացնելու ուղղությամբ:

Ըստ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի՝ պետությունների կողմից պետք է գործողություններ ձեռնարկվեն՝ ջրի իրավունքը հարգելու (ձեռնպահ մնալով այնպիսի քայլերից, որոնք կարող են խաթարել այդ իրավունքը, օրինակ՝ ծառայությունների կամայական դադարեցում), պաշտպանելու (կարգավորելով երրորդ կողմերի, ինչպես օրինակ՝ մասնավոր ջրամատակարար-ների գործունեությունը) և ապահովելու ուղղությամբ (ակտիվ քայլեր ձեռնարկելով՝ ջրի հասանելիության ընդլայնման և պահպանման համար): Թեպետ իրավունքի լիարժեք իրագործումը կարող է կախված լինել ռեսուրսների սահմանափակ հնարավորություններից, որոշ հիմնարար պարտավորություններ ենթակա են անհապաղ կատարման: Դրանք են՝ կենսական ջրի նվազագույն հասանելիության ապահովումը, ոչ խտրական մատչելիության երաշխավորումը, ջրային աղբյուրների պաշտպանությունը աղտոտումից, ինչպես նաև արդյունավետ հանրային մասնակցությամբ ազգային ջրային ռազմավարությունների մշակումը:

Մասնակցությունը Համընդհանուր մեկնաբանություն թիվ 15-ի հիմնադրույթներից մեկն է: Պետությունները պետք է ապահովեն ջրային քաղաքականության և կառավարման վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացին անհատների ու

համայնքների մասնակցության հնարավորությունը: Թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու ներառական կառավարումը հիմնարար պայմաններ են՝ ջրի իրավունքը արդար և կայուն կերպով իրագործելու համար:

Համընդհանուր մեկնաբանություն թիվ 15-ն ընդգծում է նաև միջազգային համագործակցության կարևորությունը՝ ավելի հարուստ պետություններին կոչ անելով աջակցել սահմանափակ ռեսուրսներ ունեցող երկրներին՝ կատարելու իրենց ջրային պարտավորությունները: Այն նաև զգուշացնում է, որ միջազգային համաձայնագրերը կամ զարգացման քաղաքականությունները չպետք է խոչընդոտեն ջրի իրավունքի լիարժեք իրագործմանը:

Եզրափակելով՝ հավելենք, որ Համընդհանուր մեկնաբանություն թիվ 15-ը ներկայացնում է մարդու իրավունքների վրա հիմնված ամուր և համապարփակ շրջանակ՝ ջրի իրավունքի ճանաչման և իրագործման համար: Այն շեշտում է, որ անվտանգ, բավարար և մատչելի ջրի հասանելիությունը միայն բարեգործության կամ ենթակառուցվածքային զարգացման խնդիր չէ, այլ պարտադիր իրավական պարտավորություն, որը հիմնված է մարդու արժանապատվության, օրինական պահանջների և սոցիալական արդարության վրա:

Սակավաջրությանը նպաստող գործոնները Հայաստանում

Սակավաջրությունը Հայաստանում գնալով ավելի լուրջ խնդիր է դառնում, ինչը պայմանավորված է ինչպես բնական, այնպես էլ մարդածին գործոններով: Այս խնդրի լուծումը մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցմամբ՝ ինչպիսին է, օրինակ, FIRE-ի (Իրավունքների և հավասարության ինտեգրման շրջանակ) մեթոդաբանությունը, կարևոր նշանակություն ունի ջրային ռեսուրսների կառավարումն ապահովելու համատեքստում՝ որպես իրավունքների վրա հիմնված, հավասարության և արդարության սկզբունքներին համապատասխան գործընթաց, հատկապես խոցելի իրավիճակներում գտնվող անձանց համար:

Սույն բաժնում ներկայացվում են սակավաջրության որոշ պատճառներ և դրանց ազդեցությունները մարդու իրավունքների տեսանկյունից: Բացի այդ՝ առանձնացվել են մի շարք կարևոր իրավական և քաղաքական փաստաթղթեր ու շրջանակներ:

Երաշտ և կլիմայի ազդեցության ընդլայնում

Հայաստանի կլիմայական պայմանները՝ շոգ ամառները, ցուրտ ձմեռները և ձնհալի ջրերից կախվածությունը, բնականորեն նպաստում են երաշտների առաջացմանը: Կլիմայի փոփոխությունն այս միտումը խորացրել է՝ հանգեցնելով ավելի հաճախակի և սաստիկ երաշտների, հատկապես ամռան ամիսներին, ինչը նվազեցնում է ջրային ռեսուրսների հասանելիությունը և սպառնում է գյուղական բնակչության կենսապահովմանը: Հայաստանի 2021–2025 թվականների Կլիմայի փոփոխության **հարմարվողականության ազգային գործողությունների ծրագրի (ՀԱԳԾ)** մշակումն առաջին համակարգված փորձն է դիմակայելու կլիմայի փոփոխությամբ պայմանավորված աճող ռիսկերին[12]: Ըստ ՀԱԾ-ի (NAP), կլիմայի կանխատեսումները

[12] https://www.arlis.am/hy/acts/160390

ցույց են տալիս, որ մինչև 2100 թվականը ողջ երկրի տարածքում տարեկան միջին ջերմաստիճանը կարող է բարձրանալ մինչև 4,7 ^{0}C-ով՝ ուղեկցվելով միջին տարեկան տեղումների 8,3 % անկմամբ, և այլ հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների հաճախության և ինտենսիվության աճով: Նման փոփոխություններն անխուսափելի ազդեցություն կունենան բոլոր բնական և կառավարվող համակարգերի, ջրային ռեսուրսների, գյուղատնտեսության և սննդի անվտանգության, մարդու առողջության, բնակավայրերի, ենթակառուցվածքների և այլ ոլորտների վրա: Հայաստանի կլիման փոխվում է գլոբալ միտումներին համապատասխան: Վերջին տասնամյակների ընթացքում Հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների (ՀՎԵ) հետ կապված վտանգները զուգակցվել են ջերմաստիճանի փոփոխության տեմպերի էական աճով. այսպես՝ 1929-ից մինչև 2016 թվականն ընկած ժամանակահատվածում դիտվել է միջին տարեկան ջերմաստիճանի բարձրացում 1,23 ^{0}C-ով: Ընդ որում՝ 1935-ից մինչև 2016 թվականն ընկած ժամանակահատվածում միջին տարեկան տեղումների քանակը 1960-1991 թթ. միջինի համեմատ նվազել է մոտ 9 %-ով[13]:

Պաշտոնական տվյալները ևս վկայում են, որ կլիմայական փոփոխությունների հետևանքով նվազել է ջրամբարների ջրապահպանման կարողությունը, ինչը բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսության վրա և սպառնում է պարենային անվտանգությանը[14]:

Ենթակառուցվածքային խնդիրներ

Ոռոգելի գյուղատնտեսությունը կարևոր դեր է խաղում Հայաստանի տնտեսության համար՝ ապահովելով ավելի քան 250,000 ընտանիքի եկամուտը և կազմելով գյուղատնտեսական արտադրանքի մոտ 80 %-ը[15]: Այնուամենայնիվ, ոլորտը կտրուկ անկում է ապրել, և ՀՆԱ-ում դրա մասնաբաժինը կտրուկ նվազել է՝ 2023 թվականին կազմելով 8 %՝ 2015 թվականի 16 %-ի համեմատ[16]:

Մյուս կարևոր հիմնարար պատճառը Հայաստանի հին և մաշված ոռոգման ենթակառուցվածքներն են, որոնք մեծ ջրազրկումների, ոչ արդյունավետ ջրօգտագործման և ֆերմերների շահութաբերության կրճատման պատճառ են դարձել՝ խոչընդոտելով գյուղատնտեսական զարգացմանը: Ներկա պահին ոռոգման արդյունավետությունը կազմում է ընդամենը 25 %, ինչը զգալիորեն ցածր է ժամանակակից համակարգերի 70–85 % արդյունավետությունից, և ջրի գրեթե կեսը բաշխման ընթացքում կորում է: Հետևաբար, նախկինում ոռոգվող հողերի միայն կեսն է մնում շահագործվող կարգավիճակում, ինչը հանգեցնում է ջրի պակասի, գյուղատնտեսական արտադրողականության նվազման և ֆերմերների եկամտի կորստի: Ներկայումս ջրի կորուստների արժեքը ներառված է ջրի սակագնի մեջ՝ փաստացի ստիպելով մարդկանց վճարել չօգտագործվող ջրի համար, մի բեռ, որը

[13] ՄԱԿ ԿՓՇԿ ներքո Կլիմայի փոփոխության մասին Հայաստանի 4-րդ ազգային հաղորդագրություն (2020 թ.):
[14] https://www.ecolur.org/en/news/water/15230/?utm_source
[15] World bank report No: ICR00002815., December, 2013:
[16] https://www.statista.com/statistics/440577/armenia-gdp-distribution-across-economic-sectors/?utm_source=chatgpt.com

անհամաչափորեն ազդում է խոցելի ընտանիքների վրա, ովքեր արդեն իսկ դժվարանում են վճարել հիմնական ծառայությունների համար: Որոշ տեղական համայնքներ անցել են ջրի և կոյուղու ծառայությունների կառավարման անկախ ձևաչափի, սակայն շատ հաճախ նրանք չունեն անհրաժեշտ տեխնիկական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ բավարար որակյալ ծառայություններ մատուցելու համար, ինչը սրում է անհավասարությունը:

Ենթակառուցվածքների արդիականացումն ու ջրի կառավարման բարելավումը կարող են մինչև 40 %-ով բարձրացնել ջրի արտադրողականությունը՝ առանց ջրօգտագործման չափերի ավելացման: Սա կարևոր քայլ է գյուղատնտեսության աջակցության և կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության բարձրացման համար: Ֆինանսական և ինստիտուցիոնալ բացերը խոչընդոտում են համապարփակ ջրային կառավարման բարեփոխումների իրականացումը: Հայաստանում ջրային ոլորտին վերաբերող առաջնահերթ միջոցառումների ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է պետական բյուջեի կողմից և միջազգային ֆինանսական աջակցության միջոցով: Օրինակ՝ 2023–2026 թթ. աղետների ռիսկի կառավարման ռազմավարությունը դրանք գնահատել է մոտ 394.6 միլիոն դրամ (875,000 եվրո), որից միայն 19.2 միլիոն դրամն (42,000 եվրո) է տրամադրվում պետբյուջեից, իսկ մնացածը՝ միջազգային գործընկերների կողմից: Այսօր կառավարությունը միջազգային դոնոր կազմակերպությունների հետ միասին իրականացնում է մի շարք ծրագրեր, որոնք միտված են ջրային ենթակառուցվածքների բարելավմանը և արդիականացմանը:

Թեև միջազգային դոնորները վաղուց աջակցում են Հայաստանին, սակայն կայուն լուծման համար անհրաժեշտ է վերանայել պետական բյուջեի հատկացումները և ստեղծել բարենպաստ պայմաններ պետական – մասնավոր համագործակցության համար՝ ֆինանսավորման աղբյուրները դիվերսիֆիկացնելու նպատակով:

Մրցակցային առաջնահերթություններ

Հայաստանում ջրային ռեսուրսները բաշխված են կենցաղային օգտագործման, գյուղատնտեսության, արդյունաբերության, հանքարդյունաբերության և էներգիայի արտադրության ոլորտների միջև: Գյուղատնտեսությունը մնում է ամենամեծ սպառողը, սակայն քաղաքային և արդյունաբերական ոլորտների աճող պահանջարկը մեծացնում է մրցակցությունը, հաճախ՝ ի վնաս գյուղական համայնքների:

Ջրօգտագործման թույլտվությունները և կարգավորումը կառավարվում են ազգային և տեղական մակարդակներում՝ ջրօգտագործման նորմերի, ստանդարտների և բաշխման քաղաքականության համադրության միջոցով: Այնուամենայնիվ, ներկայումս որոշումների կայացման ընթացքում հաճախ տնտեսական զարգացումը գերադասվում է փոքր ֆերմերների կարիքներից: Համաձայն ջրի բաշխման հարցում մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումների՝ հիմնական կարիքները, մասնավորապես՝ գյուղական և աղքատ համայնքների կարիքները պետք է հանդիսանան գլխավոր առաջնահերթություններ՝ միաժամանակ խթանելով ջրի կայուն և արդյունավետ օգտագործումը բոլոր ոլորտներում:

Ջրի աղտոտում

Կեղտաջրերի մաքրման անբավարար ենթակառուցվածքները նպաստում են երկրի գյուղական շրջաններում սակավաջրության առաջացմանը: Ջրի որակը կարևոր դեր է խաղում հանրային առողջապահության գործում: Մաքուր ջուրը կարևոր է հիվանդությունների կանխարգելման և համայնքների բարեկեցության ապահովման համար: Պետության համար ջրի բարձր որակի պահպանումը կենսական նշանակություն ունի ոչ միայն հանրային առողջապահության, այլև գյուղատնտեսության արտադրողականության բարձրացման, տնտեսական աճի աջակցման և ապագա սերունդների համար շրջակա միջավայրի պահպանման առումով:

Հայաստանում ջրահեռացման և կեղտաջրերի կառավարման համակարգերը պահանջում են էական բարելավում: Երկրում գործում է կեղտաջրերի կենսաբանական մաքրման մեկ կայան՝ Արմավիրի մարզում, և մեխանիկական մաքրման 18 կայաններ, որոնցից միայն 6-ն են աշխատում՝ մեկը Երևանում, հինգը՝ Գեղարքունիքի, Տավուշի և Վայոց ձորի մարզերում: Այս կայաններն իրականացնում են միայն մեխանիկական մաքրում՝ հիմնականում հեռացնելով կոշտ մասնիկները: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի՝ համեմատաբար լավ զարգացած ջրահեռացման և կեղտաջրերի համակարգը ներառում է 3,700 կմ ջրահեռացման ցանց, 8 կեղտաջրերի մաքրման կայան, 8 պոմպակայան և 350 կմ մակերեսային ջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգ: Սակայն համակարգի վերակառուցման և ընդլայնման աշխատանքները շարունակվում են:

Տնային տնտեսությունների մեծ մասը, հատկապես գյուղական վայրերում, օգտվում է փոսային զուգարաններից, և շատ քիչ բնակավայրեր ունեն կեղտաջրերի մաքրման կայաններ: Թեպետ որոշակի նվազում է գրանցվել բավարար չափով չմաքրված կեղտաջրերի ծավալներում, գյուղական համայնքների մեծամասնությունը դեռևս չունի կեղտաջրերի մաքրման համակարգեր: Գոյություն ունեցող կոյուղու ցանցերից հաճախ չմաքրված ջուրն ուղղակիորեն թափվում է ոռոգման համար օգտագործվող գետերի մեջ: Ոռոգման ջրի համակարգված որակական մոնիթորինգ գոյություն չունի, ինչը կարող է լուրջ առողջական ռիսկեր առաջացնել՝ աղտոտված ջուրը սննդային շղթա տեղափոխելով:

Արդյունաբերությունը ևս նպաստում է ջրի աղտոտմանը: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ) տվյալներով՝ բազմաթիվ քաղաքային կենտրոններ արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերը լցնում են գետեր և ջրամբարներ, լուրջ սպառնալիք դառնալով ոռոգման ջրի աղբյուրների, ինչպես նաև խմելու ջրի համար[17]: Գետերի ջուրը հաճախ գնահատվում է որպես բարձր մակարդակի աղտոտված, ինչը պահանջում է անհապաղ միջամտություն: Աղտոտված գետերի ջրով ոռոգվող մշակաբույսերը կարող են աղտոտվել՝ լուրջ վտանգներ առաջացնելով հանրային առողջության համար:

[17] https://armmonitoring.am/page/1877

Ջրի որակի մոնիթորինգի համակարգը պահանջում է բարելավում, հատկապես ոռոգման ջրի մասով, որը կարող է լուրջ ռիսկեր առաջացնել հանրային առողջության և գյուղատնտեսության համար: Ջրի որակի վերաբերյալ տեղեկատվությունը սակավ է և հաճախ անհասանելի խոցելի և մեկուսացած խմբերի համար, ինչը խոչընդոտում է հանրային առողջության պահպանման ջանքերը: Ջրային կոմիտեն անհրաժեշտության դեպքում իրականացնում է ոռոգման ջրի քանակական մոնիթորինգ՝ Ջրօգտագործողների միությունների սպասարկման տարածքներում՝ տարեկան կտրվածքով: Կան մի շարք բացեր ոռոգման ջրի որակի մոնիթորինգի իրականացման գործում, որոնք պահանջում են կարգավորում, քանի որ դրանք անմիջականորեն առնչվում են վերը նշված ռիսկերին:

Լրացուցիչ խնդիր է նաև ոլորտում որակավորված մասնագետների պակասը:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ, պաշտոնական տվյալների համաձայն, կեղտաջրերի կառավարման ոլորտում վերջին տարիներին կատարված չնչին բարելավումների արդյունքում գրանցվել է չմաքրված կեղտաջրերի համամասնության աստիճանական նվազում:

Ազդեցություններ

Վերոհիշյալ գործոնների համակցված ազդեցությունը հանգեցրել է սակավաջրության Հայաստանի շատ տնային տնտեսություններում: Սակայն սակավաջրությունը բոլորի վրա հավասարապես չի ազդում, և որոշ խմբեր ավելի շատ են տուժում, քան մյուսները: Սակավաջրությունը առկա է հատկապես գյուղական վայրերում:

Գյուղատնտեսական արտադրողականության նվազում

Սակավաջրության հետևանքով արդեն իսկ նվազել է գյուղատնտեսական արտադրողականությունը, մասնավորապես ազդելով այն գյուղական համայնքների վրա, որոնց ապրուստի միջոցը գյուղատնտեսությունն է: Ոռոգման ջրի անբավարարությունը հանգեցնում է բերքատվության նվազման, ինչի արդյունքում առաջանում են պարենային անապահովություն և տնտեսական անկայունություն: Առավել խոցելի են ֆերմերային փոքր տնտեսությունները, ովքեր հաճախ չեն օգտվում ժամանակակից ոռոգման տեխնոլոգիաներից և ջրախնայող միջոցառումներից: Կանխատեսվում է, որ կլիմայի փոփոխությունը կմեծացնի գյուղական համայնքների կանանց և երեխաների աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ հատկապես մաքուր ջրի հայթայթման և կառավարման ոլորտում:

Գյուղատնտեսությունից և գյուղական կենսամիջոցներից հրաժարում

ՄԱԶԾ-ի զեկույցի համաձայն՝ կանխատեսվում է, որ Հայաստանի միջին տարեկան ջերմաստիճանի բարձրացումը կհանգեցնի երաշտի, համապատասխանաբար նաև ջրի պակասի ռիսկերի աճի, ինչպես նաև բերքատվության նվազման. այս գործոնները զգալիորեն նպաստում են գյուղական բնակչության կրճատմանը և արտագաղթին[18]:

[18] https://www.worldbank.org/en/news/press-release/2024/11/08/climate-action-in-armenia-can-deliver-cleaner-air-healthier-communities-and-stronger-economic-growth?utm_source=chatgpt.com

Չնայած կառավարության, քաղաքացիական հասարակության, մասնավոր սեկտորի և միջազգային գործընկերների ջանքերին, ավելի մեծ ուշադրություն է դարձվում քաղաքային ջրամատակարարման վրա, և գյուղատնտեսական արտադրողակա-նության անկումը շարունակական բնույթ է կրում՝ խթանելով միգրացիան գյուղից քաղաք և թուլացնելով գյուղական համայնքների տնտեսական ու սոցիալական հիմքերը: Ջրի պակասի հաղթահարման մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը պետք է ներառի գյուղական պայմանների նկատմամբ հարմարվողականությանն աջակցող և կլիմայով պայմանավորված միգրացիան կանխող ռազմավարություններ:

Սոցիալական վեճեր տարբեր ջրօգտագործողների միջև

Սահմանափակ ջրային պաշարների համար գյուղատնտեսության, արդյունաբերության և կենցաղային ջրօգտագործողների մրցակցությունը առաջացրել է սոցիալական տարաձայնություններ՝ հատկապես գյուղական և քաղաքային բնակչության միջև: Նման վեճեր հաճախ առաջանում են այն ժամանակ, երբ ջրաբաշխման ժամանակ որոշ խմբեր առաջնահերթություն են ստանում: Հայաստանում բացակայում է ջրային վեճերի լուծման պաշտոնական և մատչելի համակարգըԻհարկե ՀՀ օրենսդրությունը նախատեսում է այդ ոլորտի վեճերի լուծման դատական գործընթաց, բայց հաշվի առնելով համապատասխան ծախսերն ու պահանջվող ժամանակը, հասարակությունը գերադասում է չդիմել դատական ատյան: Դրա մասին է վկայում պրակտիկայում նմանատիպ հայցերի ու պահանջների, դատական գործերի բացակայությունը: Վեճերի լուծման կազմակերպված այլընտրանքային մեխանիզմների բացակայությունը սրում է հակամարտությունները և անհամաչափորեն վնասում խոցելի խմբերին: Վեճերի լուծման արդար և ներառական համակարգերի ստեղծումը կենսական նշանակություն ունի ջրային ռեսուրսների արդարացի և հավասարաչափ կառավարման համար:

Առողջության վրա բացասական ազդեցություն

Աղտոտված ջուրը լուրջ սպառնալիք է մարդու առողջության համար և կարող է մեծապես նպաստել ջրի միջոցով տարածվող հիվանդությունների ու համաճարակների բռնկմանը, ինչը հանգեցնում է բժշկական ծախսերի ավելացման և աշխատանքային կարողությունների նվազման՝ բացասաբար անդրադառնալով տնային տնտեսությունների եկամտի վրա:

Տարաչափ ազդեցություններ

Սակավաջրությունը բոլոր խմբերի վրա հավասարապես չի ազդում: Մարդու իրավունքների վրա հիմնված և փոխկապակցված հատկանիշները հաշվի առնող մոտեցման կիրառումը, օրինակ՝ FIRE (Իրավունքների և հավասարության ինտեգրման շրջանակ) մեթոդաբանությունը, փորձում է հասկանալ տարբեր խմբերի ջրի իրավունքի խոցելիության առանձնահատկությունները:

- Գյուղական և քաղաքային բնակավայրերի անհավասարության և աղքատության մակարդակի տարբերություններ. Հայաստանի գյուղական շրջանները, մասնավորապես՝ Արարատյան դաշտավայրը, Շիրակի և

Գեղարքունիքի մարզերը, ավելի շատ են տուժում ջրի պակասից, քան քաղաքային կենտրոնները: Քաղաքները սովորաբար ունեն կենտրոնացված ջրամատակարարման համակարգեր և արտակարգ իրավիճակներին արձագանքման մեխանիզմներ, մինչդեռ գյուղական բնակավայրերում հաճախ ջրամատակարարումն անկանոն է[19]: Որոշ բնակավայրերում ռոգման ենթակառուցվածքների անմխիթար վիճակը և ջրի գնի աճը է՛լ ավելի են սրում գյուղական բնակավայրերի խոցելիությունը: Փոքր տնտեսությունները չեն կարող ձեռք բերել այլընտրանքային ջրի աղբյուրներ, ինչպիսիք են ջրհորները կամ պահեստավորման համակարգերը: Աղքատությունը ավելի է սրում այս մարտահրավերները: Ցածր եկամուտ ունեցող՝ գյուղական, թե քաղաքային տնտեսությունները, հաճախ դժվարանում են վճարել ջրամատակարարման վճարները կամ մասնավոր ֆիլտրման ու պահեստավորման ծախսերը, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում ջրի ապրանքայնացման տեսանկյունից: Բարձր լեռնային գյուղերը հաճախ բախվում են ջրամատակարարման հետ կապված մեկ այլ լուրջ խնդրի ևս, ինչպես օրինակ՝ ձմռանը խողովակների սառչելը:

- Գենդերային անհավասարություն և դերաբաշխում տնտեսության ներսում. հայկական ընտանիքներում ավանդաբար կանայք են զբաղվում կենցաղային հարցերով և ջրի սպառմամբ (օրինակ՝ հիգիենա, սնունդ պատրաստել): Ջրի պակասը լարվածություն է ստեղծում այս դերերի և պարտականությունների նկատմամբ՝ հաճախ հանգեցնելով սահմանափակ ռեսուրսների շուրջ կոնֆլիկտի: Կանայք են կրում ջրամատակարարման խափանումների ժամանակ այլընտրանքային ջրի աղբյուրներից ջուր բերելու պարտականությունը, ինչը սահմանափակում է նրանց կրթության և աշխատանքի հնարավորությունները: Իրավունքների վրա հիմնված մոտեցումը պետք է ապահովի կանանց ակտիվ ներգրավվածությունը ջրային կառավարման կառույցներում:

- Էթնիկ, կրոնական և սոցիալական փոքրամասնություններ. էթնիկ և կրոնական փոքրամասնությունները, այդ թվում՝ եզդիական ու քրդական համայնքները

[19] Արարատյան դաշտավայր ՀՀ կարևորագույն գյուղատնտեսական շրջանն է: Այստեղ ստորգետնյա ջրերի մակարդակի զգալի անկում է նկատվում: 1980-ականների սկզբից ի վեր արտեզյան ջրատար շերտը նվազել է մոտավորապես երկու երրորդով: Այս անկումը մեծապես պայմանավորված է ձկնաբուծության արագ ընդլայնմամբ, որն այժմ կազմում է հովտում ջրի տարեկան օգտագործման ավելի քան 77 %-ը՝ խաթարելով ջրի բաշխման ավանդական ձևերը, որոնք նախկինում հավասարակշռում էին տնային տնտեսությունների, ոռոգման և խմելու ջրի կարիքները. https://ebrdgeff.com/armenia/
Շիրակի մարզում, մասնավորապես Գյումրի քաղաքում, ջրամատակարարման համակարգը բախվում է լուրջ մարտահրավերների: Չնայած մոտավորապես 1700 լ/վրկ ընդհանուր հզորությամբ լիարժեք հոսք ունեցող աղբյուրների առկայությանը, գործող բաշխիչ ցանցում առկա են ջրի մեծ կորուստներ: Որոշ գոտիներում ճնշումն անբավարար է անգամ հինգհարկանի բազմաբնակարան շենքերում ջուր մղելու համար: Բացի այդ՝ Շիրակի և Վայոց ձորի մարզերի գյուղական դպրոցներում գրանցվել են ջրի և սանիտարական պայմանների վատթարագույն պայմաններ, ինչը հանգեցրել է վարակիչ հիվանդությունների հաճախակի բռնկումների. https://www.eib.org/attachments/registers/, https://evnreport.com/law-society/

հաճախ գտնվում են հեռավոր կամ թերսպասարկվող տարածքներում՝ վատ ենթակառուցվածքներով և մաքուր ջրի սահմանափակ հասանելիությամբ: Պատմական մարգինալացումը խորացնում է նրանց մեկուսացումը: Միգրանտ աշխատողները, ովքեր հաճախ բնակվում են չհաշվառված բնակավայրերում, նույնպես խոցելի են: Պաշտոնական բնակության կարգավիճակի բացակայության պատճառով նրանք հաճախ զրկվում են քաղաքային ջրամատակարարման ծառայություններից: Այս անհավասարությունների հաղթահարումը պահանջում է փոքրամասնությունների և մեկուսացած համայնքների նկատմամբ խտրականության դեմ ուղղված քաղաքականության մշակում և ներառական ենթակառուցվածքների զարգացում:

- Հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցներ և երեխաներ. հաշման-դամություն ունեցող անձինք, տարեցները և երեխաները ջրի պակասի հետ կապված ավելի մեծ ռիսկերի են բախվում: Տեղաշարժման հետ կապված խնդիրները դժվարացնում են հեռավոր աղբյուրներից ջուր բերելու հնարա-վարությունը ջրամատակարարման դադարեցման դեպքում, իսկ անապահով ջրի աղբյուրները արտակարգ իրավիճակներում մեծացնում են առողջական ռիսկերը: Օրինակ՝ հնամաշ ենթակառուցվածքներում խողովակները հաճախ վնասվում են, և համայնքները մնում են առանց ջրի, և ստիպված են լինում օգտվել ոչ անվտանգ ջրհորներից կամ չկարգավորված ջրամատակարարման համակարգերից: Այս դեպքում խոցելի են հատկապես երեխաները, ովքեր աղտոտված ջուր օգտագործելու պատճառով երկարատև առողջական խնդիրների առաջացման ռիսկի են ենթարկվում: Արտակարգ իրավիճակներին արձագանքման մեխանիզմների կիրառման և ենթակառուցվածքային ներդրումների ժամանակ պետք է առաջնահերթությունը տրվի մատչելիությանը և այս խմբերի կարիքներին:

Սակավաջրության դիֆերենցիալ ազդեցությունները բացահայտում են Հայաստանի բնակչության կառուցվածքային անհավասարությունները: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ICESCR), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (CEDAW), Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (CRC) և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի (CRPD) շրջանակներում Հայաստանի պարտավորությունները պահանջում են, որ պետու-թյունը նախաձեռնողական միջոցներ ձեռնարկի ջրի հավասար հասանելիություն ապահովելու համար:

Օրենք և քաղաքականություն

Ջրի իրավունքը միջազգայնորեն ճանաչված մարդու հիմնարար իրավունք է: Չնայած Հայաստանում այն դեռևս չի ճանաչվել որպես կիրառելի իրավունք, սակայն տարբեր օրենքներ, քաղաքականություններ և ռազմավարական ծրագրեր նպաստում են ջրի իրավունքի ապահովումը երեք ասպեկտներով՝ մատչելիություն, հասանելիություն, որակ: Լրացուցիչ հարցերը քննարկվում են «Այլ» բաժնում:

Մատչելիություն

Ջրային օրենսգիրք. ջրի օգտագործումը, բաշխումը և պաշտպանությունը կարգավորող հիմնական օրենսդրական փաստաթուղթն է:

Հարմարվողականության ազգային ծրագիր (ՀԱԾ) 2021-2025 թթ. համար (ՀՀ կառավարության որոշում N749-L). կլիմայական ռիսկերի նվազեցումը ինտեգրվում է առանձին ոլորտների ռազմավարությունների մեջ՝ ջրային ռեսուրսների կառավարումը դիտարկելով որպես առաջնահերթություն:

Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության 2022-2026 թվականների ծրագիրը (ՀՀ կառավարության N1692-L որոշում) սահմանում է հարմարվողականության 26 առաջնահերթ միջոցառումներ՝ ուղղված սակավաջրության նվազեցմանը, ռեսուրսների պահպանմանը և կլիմայական ռիսկերի կառավարմանը:

ՀՀ կառավարության թիվ 925-Ն որոշումը երաշտի մոնիթորինգի մասին սահմանում է երաշտի ինտենսիվության համակարգված մոնիթորինգի և դասակարգման մեթոդաբանություններ, որոնք կարևոր են սակավաջրության ժամանակ դրա հասանելիությունը կառավարելու համար:

Կարևոր է նշել նաև, որ ՀՀ փոխվարչապետի գլխավորությամբ ձևավորվել է աշխատանքային խումբ, որի նպատակն է մշակել և ներկայացնել Ջրի ազգային ռազմավարության նախագիծ: Այն ապահովելու է ջրային ռեսուրսների կայուն կառավարման շրջանակ՝ կենտրոնանալով ջրօգտագործման արդյունավետության բարելավման, ջրի պակասի խնդրի լուծման և ջրային ռեսուրսների մատչելիության երկարաժամկետ պլանավորման վրա:

Հասանելիություն

Ֆիզիկական, տնտեսական և ոչ խտրական հասանելիությունը ջրային ոլորտի ծառայությունների նկատմամբ:

«Ազգային ջրային քաղաքականության հիմնարար դրույթների մասին» թիվ ՀՕ-96-Ն օրենքը սահմանում է ջրային ռեսուրսներին հավասար և կայուն հասանելիության հիմնական սկզբունքները:

Ջրային օրենսգիրքը նախատեսում է մեխանիզմներ տարբեր տարածաշրջաններում ջրի բաշխումն ապահովելու համար, սակայն բացակայում են մարգինալացված կամ գյուղական համայնքներին առաջնահերթություն տվող հստակ դրույթները:

Կառավարման սկզբունքներ. ՀՀ Ջրային օրենսգիրքը որպես ջրային ռեսուրսների արդար կառավարման էական բաղադրիչներ կարևորում է մասնակցությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը և ներառականությունը:

«Հարմարվողականության ազգային ծրագիրը» և «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության 2022-2026 թվականների ծրագիրը»

ընդգծում են առաջարկվող միջոցառումները տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքներում ներառելու, շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը խթանելու և ջրային ռեսուրսների կառավարման պլանավորման աշխատանքներին համայնքի մասնակցությունը խրախուսելու անհրաժեշտությունը:

Որակ

Հետևյալ իրավական ակտերը կազմում են ջրի որակի վերաբերյալ հիմնական կարգավորումները: «Բնապահպանական վերահսկողության մասին» և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքները նախատեսում են ստեղծել ջրի որակի չափանիշների վերահսկողության և հանրությանը լիարժեք տեղեկատվությամբ ապահովման մեխանիզմներ:

ՀՀ օրենքը «Հանրային առողջապահության մասին» (ընդունվել է 2024 թվականի փետրվարի 28-ին. https://www.arlis.am/hy/acts/191172) սահմանում է հանրային առողջության ապահովման պահանջները ջրամատակարարման և ջրօգտագործման բնագավառում (հոդված 35).

- Խմելու, կենցաղային, տնտեսական կարիքների համար օգտագործվող ջրի, կենտրոնացված և ոչ կենտրոնացված ջրամատակարարման, լողանալու, սպորտով զբաղվելու, հանգստի և բուժական նպատակներով օգտագործվող, ինչպես նաև բնակավայրերի սահմաններում գտնվող ջրամբարների ջրի որակը պետք է համապատասխանի հանրային առողջապահական նորմերին:
- Խմելու ջրի որակը հանրային առողջապահական նորմերին չհամապատասխանելու դեպքում Տեսչական մարմնի որոշմամբ հիմնարկների, իրավաբանական և ֆիզիկական անձանց խմելու ջրի օգտագործումը ժամանակավոր դադարեցվում է:

Կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրեր. Այս փաստաթղթերում դիմակայունությունը ամրապնդելու նպատակով շեշտը դրվել է ենթակառուցվածքների արդիականացման և ջրի որակի մոնիթորինգի բարելավման վրա:

Հարակից շրջանակներ

Կառավարման, աղետների ռիսկի կառավարման և ավելի լայն բնապահպանական պլանավորման հետ կապված հարցեր և շրջանակներ, որոնք անուղղակի ազդեցություն ունեն ջրի իրավունքի իրականացման վրա:

Աղետների ռիսկի կառավարման 2023-2030 թվականների ազգային ռազմավարություն (ՀՀ կառավարության որոշում N1717-L). նպատակ ունի բարձրացնել Հայաստանի կարողությունները աղետների, այդ թվում՝ ջրային ռիսկերի կառավարման ոլորտում՝ ռիսկերի մասին իրազեկվածության, արտակարգ իրավիճակներին արձագանքման և վերականգնման մեխանիզմների բարելավման միջոցով:

CEPA (Հայաստան – ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր). Հայաստանի՝ շրջակա միջավայրի կառավարումը եվրոպական

չափանիշներին համապատասխանեցնելու պարտավորությունները ներառում են բարելավումներ ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում:

Եզրակացություն

Չնայած Հայաստանը կարևոր առաջընթաց է գրանցել ջրի իրավունքի իրականացման հիմքերի ստեղծման գործում, սակայն դեռևս առկա են էական մարտահրավերներ: Բոլորի, մասնավորապես՝ ամենախոցելի խմբերի համար հասանելիության, մատչելիության և որակի ապահովումը պահանջում է ենթակառուցվածքային խափանումների վերացում, ոլորտի կառավարման բարելավում, իրավական պաշտպանության բարելավում և ջրային ռեսուրսների կայուն և արդար կառավարման ապահովում՝ կլիմայի փոփոխության պայմաններում:

4. Տեղեկատվության հասանելիություն, հանրության մասնակցություն և արդարադատության մատչելիություն

Տեղեկատվության հասանելիությունը, հանրության մասնակցությունը և արդարադատությանը մատչելիությունը մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման հիմնական ընթացակարգային չափորոշիչներն են: Երեքն էլ արտացոլված են ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրհուսի) կոնվենցիայում, որին միացել է նաև Հայաստանը: Այս բաժնում նկարագրվում են մանրամասներ այն մասին, թե ինչպես է Հայաստանը առաջընթաց գրանցում այս ոլորտում և որտեղ է անհրաժեշտ լրացուցիչ աշխատանքներ իրականացնել:

Տեղեկատվության հասանելիություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը ժողովրդավարության ամրապնդման, մարդու իրավունքների երաշխավորման, տեղեկատվության հանրայնացման կարևոր իրավական երաշխիք է: Այն պետական մարմիններին պարտավորեցնում է թափանցիկության ու հաշվետվողականության սկզբունքների հիման վրա բնակչությանն ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ, ամրագրում է տեղեկատվության տրամադրման կարգը, ժամկետները, պայմաններն ու սահմանափակումները:

Տեղեկատվությանը հասանելիության իրավունքը երաշխավորվում է նաև տեղական ինքնակառավարման մակարդակում, ինչպես սահմանված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասում թվարկված են այն տեղեկությունները և պաշտոնական փաստաթղթերը, որոնք պետք է նախաձեռնողաբար հրապարակվեն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց պաշտոնական կայք-էջերում:

ՀՀ ջրային օրենսգրքի 20-րդ հոդվածը սահմանում է ջրային ոլորտին առնչվող տեղեկատվության տրամադրման և հանրային մասնակցության կարգն ու պայմանները:

Հաշվի առնելով Հայաստանի խոցելիությունը կլիմայական աղետների նկատմամբ՝ կարևոր նշանակություն ունի աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներին պատրաստվածության բարելավումը: Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) փրկարար ծառայությունը գլխավորում է վաղ նախա-զգուշացման համակարգերի (EWS) բարելավման աշխատանքները՝ կիրառելով SMS ահազանգերի, աշխարհագրական թիրախավորման և կանխատեսման գործիքներ: Մշակվել է երաշտի և ջրհեղեղի ազգային արձագանքման ծրագիր, ինչպես նաև ստեղծվել են բարձր ռիսկային տարածաշրջաններում աղետների արձագանքման համայնքային ստորաբաժանումներ:

Համաձայն շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության հասանելիության մասին Օրհուսի կոնվենցիայի՝ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի մաս կազմող Երևանի Օրհուսի կենտրոնը արձագանքում է հանրության հարցումներին և ակտիվորեն տարածում է տվյալներ շրջակա միջավայրի վերաբերյալ:

Հանրության համար բնապահպանական տեղեկատվության հասանելիությունը որպես առաջնահերթություն ընդունելով՝ Հայաստանը 2020 թվականին գործարկեց Հայաստանի էկոպորտալ կայքը (Էկոպորտալի կայք - Поиск в Google), որը հավաքագրում է շրջակա միջավայրի պայմանների գնահատման, զեկույցների պատրաստման և քաղաքականության մշակման համար կենսական նշանակություն ունեցող բնապահպանական տվյալներ: Այս ցուցանիշները բացահայտում են հիմնական միտումները և պատճառահետևանքային կապերը՝ օգնելով սահմանել քաղաքականության առաջնահերթությունները և կատարել միջազգային պարտավորությունները: Ներկայումս Էկոպորտալում հասանելի են ջրային ոլորտի յոթ ցուցանիշներ, որոնք պարբերաբար թարմացվում են: Այնուամենայնիվ, պորտալը հիմնականում տեխնիկական բնույթի է և հասանելի չէ լայն հանրությանը: Էկոպորտալի վերածրագրավորումը և Սևանա լճին նվիրված վեբ-էջի ստեղծումը ներկայումս գտնվում են մեկնարկային փուլերում:

Ջրի որակի վերաբերյալ տեղեկատվությունը շատ քիչ է և հաճախ անհասանելի խոցելի ու մեկուսացած բնակչության համար, ինչը խոչընդոտում է հանրային առողջության պաշտպանությանն ուղղված ջանքերը:

Բացի այդ՝ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի Հիդրոլոգիական ծառայության բաժինը վերահսկում է ջրի հոսքերը և մակարդակները Հայաստանի բազմաթիվ կայաններում՝ տրամադրելով կարևոր տվյալներ որոշումների կայացման և հանրային իրազեկման համար:

Ոլորտին առնչվող որոշ տեղեկություններ հասանելի են նաև Կլիմայի փոփոխության տեղեկատվական հարթակում (https://nature-ic.am/en/), որը ստեղծվել է 1996 թվականին ՄԱԶԾ-ԳԷՖ «Հայաստան. կլիմայի փոփոխության վերաբերյալ երկրի ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում և շարունակում է գործել ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրի շրջանակներում:

Թեև հայերենը Հայաստանում հաղորդակցության հիմնական լեզուն է, ազգային փոքրամասնությունները, ինչպիսիք են եզդիները, քրդերը և ռուսները, այլք, հաճախ իրենց առավել հասկանալի՝ իրենց լեզվով հաղորդակցման կարիք ունեն: Այլ լեզուների ներառումը, պարզեցված նյութերի օգտագործումը և համայնքային լրատվամիջոցները կարևոր նշանակություն ունեն ջրին առնչվող տեղեկատվությունը հասարակության ավելի լայն շրջանակների համար հասանելի դարձնելու գործում: Հասանելիության ապահովմանն ուղղված միջոցառումները, ինչպիսիք են Բրայլի գրերը, ժեստերի լեզուն և աուդիո նկարագրությունները, դեռևս մեծ մասամբ բացակայում են, բայց դրանք շատ անհրաժեշտ են: 2021 թվականի մայիսին Հայաստանն ընդունեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքը, որը ներառում է ծառայությունների և տեղեկատվության հասանելիության երաշխիքներ՝ այդ թվում ջրամատակարարման ծառայություններին հավասար հասանելիություն ապահովելու համար:

Արդյունավետ հաղորդակցությունը կարևոր նշանակություն ունի ջրային ոլորտում հանրային իրազեկվածության բացերը լրացնելու առումով:

Անձնական շփումներ

Համայնքային հանդիպումներ և հանրային խորհրդակցություններ. անմիջական ներգրավվածությունը կարևոր է, հատկապես, սահմանափակ թվային ենթակառուցվածքներ ունեցող գյուղական համայնքներում: Պաշտոնատար անձանց, հասարակական կազմակերպությունների կամ այլ նախաձեռնող խմբերի Գյուղական բնակավայրեր այցելությունների և հանդիպումների ժամանակ կարող են քննարկվել ջրային ռեսուրսների կառավարմանը, ջրօգտագործման քաղաքականությանը և պահպանմանը վերաբերող հարցեր՝ ապահովելով երկկողմանի հաղորդակցություն քաղաքականություն մշակողների և համայնքների միջև:

Աշխատաժողովներ և վերապատրաստման դասընթացներ. գենդերային ուղղվածությամբ նախաձեռնությունները, ինչպիսիք են «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպության կողմից, ՄԱԿ-ի ժողովրդավարության հիմնադրամի աջակցությամբ իրականացվող միջոցառումները, ուղղված են գործնական ուսուցման և կայուն գործելակերպի խթանմանը: Այս նախագծերը նպատակ ունեն խթանել կանանց մասնակցությունը համայնքի ջրային ռեսուրսների արդարացի կառավարման աշխատանքներին:

Անկախ այս ամենից, դեռևս առկա են լուրջ մարտահրավերներ բարձր խոցելիության խմբերին աջակցելու հարցում: Հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ բախվում են խոչընդոտների՝ անմատչելի շենքերի և մատչելի տեղեկատվության բացակայության պատճառով: Գյուղական և հեռավոր համայնքներում նույնպես առկա են ջրամատակարարման ծառայությունների հասանելիության անհավասարության հետ կապված խնդիրներ: Այս բացթողումները լրացնելու համար որոշակի ջանքեր են գործադրվում, այդ թվում՝ գործողությունների ծրագրի մշակում և համայնքային գնահատումներ:

Օրհուս կենտրոնը կազմակերպում է սեմինարներ, կլոր սեղաններ և հանրային քննարկումներ, այդ թվում՝ Ջրի համաշխարհային օրվան նվիրված ամենամյա միջոցառումներ:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) կողմից անցկացվող աշխատաժողովներ. Հայաստանի ազգային ջրային համագործակցությունը և «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ն, ինչպես նաև այլ կազմակերպություններ տեղական համայնքներին ակտիվորեն ներգրավում են կայուն ջրային կառավարման նախաձեռնություններում:

Էներգետիկ հաստատությունների կողմից իրականացվող իրազեկման նախաձեռնություններ. Հայաստանի վերականգնվող ռեսուրսների և էներգաարդյունավետության հիմնադրամը խթանում է վերականգնվող էներգիան և էներգաարդյունավետությունը տպագիր նյութերի, հեռուստատեսային հարցազրույցների, դպրոցական ծրագրերի և «էներգետիկ շաբաթների» միջոցով՝ խրախուսելով հանրային և քաղաքական աջակցությունը:

Մասնավոր հատվածի ներգրավվածություն. SolarOn, Green Energy Armenia ընկերությունները, ինչպես նաև ArmSwissBank-ը, ACBA Bank-ը, Ameria Bank-ը և այլ կազմակերպություններ խթանում են կանաչ ֆինանսավորումը և կայուն տեխնոլոգիաների տարածումը կրթական արշավների միջոցով:

Տպագիր լրատվամիջոցներ և հրատարակություններ
Պետական մարմինները, ՀԿ-ները և ակադեմիական հաստատությունները տարածում են բրոշյուրներ, գրքույկներ և պաստառներ, որոնք վերաբերում են ջրի պահպանմանը, կլիմայի փոփոխության ազդեցությանը և կեղտաջրերի կառավարմանը: Այնուամենայնիվ, այս նյութերը ևս հաճախ սահմանափակ հասանելիություն ունեն գյուղական կամ մարգինալացված համայնքներում:

Տարբեր ոլորտային նախաձեռնությունների շրջանակներում պատրաստվում են ոլորտին առնչվող հետազոտությունների արդյունքները և մշակված քաղաքականության համառոտագրերը, սակայն տեխնիկական լեզվի պատճառով դրանք կարող են դժվարհասանելի լինել լայն հանրության համար:

Ոչ կառավարական/ոչ պետական առցանց հարթակներ և թվային լրատվամիջոցներ
«ԷկոԼուր» տեղեկատվական, «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ների և «ՍիվիլՆեթ» կազմակերպությունների կողմից գործարկվող հարթակները տարածում են նորություններ, հետազոտական և քարոզչական նյութեր: Սոցիալական մեդիահարթակները, մասնավորապես՝ Facebook, YouTube, ավելի ու ավելի հաճախ են օգտագործվում երիտասարդ և քաղաքային լսարանին ներգրավելու համար:

Ակադեմիական և քաղաքացիական հասարակության ներդրումներ
Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան իր գործունեության ընթացքում մշակել և տարածել է աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ կրթական նյութեր՝ կիրառելով հետևյալ մեխանիզմները.

- Պաշտոնական կայքեր և թվային գրադարաններ
- Կրթական նյութեր դպրոցների և մանկապարտեզների համար
- Ուսումնական ծրագրեր
- Տպագիր և թվային հրատարակություններ
- Ուսուցողական տեսանյութեր և անիմացիոն ֆիլմեր

Ակադեմիան ղեկավարում է արտակարգ իրավիճակների կրթության մասնագիտական խումբը՝ Աղետների ռիսկի նվազեցման ազգային հարթակի շրջանակներում, և աջակցում է միջազգային լավագույն փորձի տեղայնացմանը։

Այնպիսի հաստատություններ, ինչպիսիք են Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) և Յակոբեան բնապահպանական կենտրոնը, մասնակցային նախագծերի միջոցով միավորում են հետազոտությունները և հանրային գործողություններ։ Երևանի պետական համալսարանի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը ակտիվորեն տարածում է շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվություն ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և լայն լսարանի շրջանակներում անցկացվող կլոր սեղանների միջոցով, որոնց մասնակցում են պետական պաշտոնյաներ և իրավաբանական փորձագետներ՝ խթանելով հանրության ավելի մեծ ներգրավվածությունը։

Ջանքեր են ձեռնարկվում տեղեկատվության մատչելիությունն ապահովելու համար՝ հաշվի առնելով սեռը, գրագիտությունը, լեզուն և զգայական խանգարումները։

Տեղեկատվություն արտակարգ իրավիճակներում
Ներքին գործերի նախարարությունը աղետների ժամանակ, ինչպես նաև դրանցից առաջ և հետո հանրային տեղեկատվության ապահովման համար պատասխանատու հիմնական մարմինն է։ Այն օգտագործում է հաղորդակցման մի շարք մեթոդներ՝ կախված իրավիճակից.

- Զանգվածային լրատվամիջոցներ. հանրային լրատվամիջոցներով տարածվող հայտարարությունները կարևոր թարմացումներ են տրամադրում արտակարգ իրավիճակների ժամանակ։
- Տեղեկատվական արշավներ. տպագիր նյութերը, ինչպիսիք են գրքույկները և ուղեցույցները, կրթում են հանրությանը անվտանգության, արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և ռիսկերի կառավարման վերաբերյալ։
- Սոցիալական լրատվամիջոցներ (Facebook, YouTube). համաժամանակյա թարմացումները և արտակարգ իրավիճակների մասին ահազանգերը տարածվում են շատ արագ՝ հանրությանը տեղեկացնելու և ներգրավելու համար։
- Կայքեր և առցանց հարթակներ. պաշտոնական հարթակների միջոցով նախարարությունները տրամադրում են տվյալներ և թարմացումներ դրանց վերաբերյալ։
- Ուսումնական ծրագրեր. փրկարար ծառայությունը կազմակերպում է ջրհեղեղների հետ կապված ուսումնական ծրագրեր, որոնք ներառում են

ռիսկերի գնահատում, փրկարարական գործողություններ և մասնագիտացված սարքավորումների օգտագործում:

- Վաղ նախազգուշացման և ահազանգման համակարգեր. արտակարգ իրավիճակների մասին ահազանգերը տարածվում են շչակների, SMS-ի, էլեկտրոնային փոստի և զանգվածային լրատվամիջոցների միջոցով: Ահազանգերը հաճախ ըստ տեղանքի հարմարեցված են բազմալեզու և որոշակի ռիսկի խմբերի համար:
- Զանգերի կենտրոններ և թեժ գծեր. զանգերի երեք կենտրոնները՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության, ոստիկանության և Ազգային ճգնաժամերի կառավարման կենտրոնի, միավորվում են մեկ միասնական համակարգի մեջ՝ աշխատանքների համակարգման և արագ արձագանքման նպատակով:
- Բացի այդ՝ Առողջապահության նախարարությունը Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի (NCDC) միջոցով, ապահովում է առողջապահական տեղեկատվության և ռիսկերի գնահատման տարածումը աղետների ժամանակ, ինչպես նաև դրանցից առաջ և հետո:

Հանրային մասնակցություն

Հանրային մասնակցությունը կարևորագույն նշանակություն ունի կառավարման թափանցիկության, ներառականության և հաշվետվողականության խթանման գործում:

Հանրային անբավարար մասնակցությունը կարող է օտարացնել համայնքի որոշ հատվածներ, խաթարել վստահությունը և հանգեցնել վատ տեղեկացված որոշումների կայացման: Չնայած ստեղծվել են մասնակցային որոշումների կայացման տարբեր մեխանիզմներ, շահագրգիռ կողմերի ներգրավվածության մակարդակը զգալիորեն տարբերվում է:

Հայաստանում շարունակվում են մասնակցային մեխանիզմների բարելավման ջանքերը: Ստորև մենք վերանայել ենք առկա մեխանիզմները՝ ընդգծելով դրանց ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև բարելավման կարիք ունեցող ոլորտները:

«**Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների եվ առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը եվ ժամկետները սահմանելու մասին**»ՀՀ կառավարության 2014 թվականի թիվ 1395 որոշումը՝ խմբագրված 2023 թ-ի դեկտեմբերի 28-ին, կարգավորում է հանրային լսումները և մասնակցությունը շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացմանը, ինչը կարևոր է ջրային ռեսուրսների կառավարման գործում համայնքի ներգրավվածության համար:

Նախարարություններին կից հանրային խորհուրդներ

Յուրաքանչյուր նախարարություն ունի նախարարին կից հասարակական խորհուրդ, որի գործունեությունը կարգավորվում է նախարարի հրամաններով: Այնուամենայնիվ, այս խորհուրդների արդյունավետությունը հաճախ կախված է կոնկրետ նախարարությունից և խորհրդի անդամների ներգրավվածությունից, ինչպես նաև հաստատության կամ նախարարի՝ հանրության հետ աշխատելու պատրաստակամությունից:

Ներկայումս մշակվում է վարչապետի որոշման նախագիծ՝ հանրային խորհուրդների ընթացակարգի և ձևավորման գործընթացների ստանդարտացված կանոնակարգը հաստատելու վերաբերյալ՝ նպատակ ունենալով բարձրացնել դրանց արդյունավետությունն ու թափանցիկությունը:

Օրինակ՝ Շրջակա միջավայրի նախարարին կից հասարակական խորհուրդը կանոնավոր նիստեր չի անցկացրել. վերջինը տեղի է ունեցել 2024 թվականին: Ավելին, նիստերի և քննարկումների արձանագրությունները հասանելի չեն նախարարության կայքում[20]:

Օրհուս կենտրոնը որպես մասնակցային հարթակ
Օրհուսի կոնվենցիայի իրականացմանը աջակցելու համար 2002 թվականին ստեղծված Երևանի Օրհուս կենտրոնը, որը գործում է Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) ներքո, կարևոր դեր է խաղում ավելի արդյունավետ որոշումների կայացման նպատակով հանրային իրազեկվածության բարձրացման և շահագրգիռ կողմերի միջև երկխոսության խթանման գործում:

Սակայն, կենտրոնը գտնվում է Երևանում, ուստի այն չի կարող ապահովել բոլոր մարզերի մասնակցությունը: Կենտրոնը նաև չունի բավարար հարմարություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչը ազդում է դրա ներառականության վրա:

Մասնակցային բյուջետավորման հարթակ
Լավ կառավարումը խթանող նախագծերը համակարգվում են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) կողմից: Հիմնական բաղադրիչը հանրային մասնակցության ընդլայնումն է, ինչը հնարավորություն կտա լայնորեն ներառվել որոշումների կայացման գործընթացներում:

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի միջոցով ՀՀ կառավարությունը 2022–2024 թվականների «Բաց կառավարման գործընկերություն» (ԲԿԳ) նախաձեռնության շրջանակներում ներդրել է մասնակցային բյուջետավորում տեղական մակարդակում:[21]

[20] ՀՀ վարչապետի 22.09.2025 N 835 - Լ որոշմամբ հաստատվել է Նարարներին և ՀՀ կառավարության ենթակա մարմիններին կից հասարակական խորհուրդների ձևավորման կարգը և աշխատակարգը. https://www.arlis.am/hy/acts/212663/latest , որով բարձրացված հարցը կարգավորում է ստացել:
[21] Բաց կառավարման գործընկերության պաշտոնական կայքէջ՝ OGP Armenia | OGP-Armenia National Action Plan 2022-2024, 2022-24 թթ. գործողության պլան՝ OGP 2022-2024 NaP Eng.DOCX

2022–2024 թթ. գործողությունների ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության N 1568-L որոշմամբ՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ին, որի շրջանակներում մասնակցային բյուջետավորման իրականացման պատասխանատու մարմին է նշանակվել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

Չորս համայնքներում՝ Աբովյան, Արմավիր, Աշտարակ և Ջերմուկ, մեկնարկել են փորձնական ծրագրեր, որոնք թույլ են տվել քաղաքացիներին մասնակցել համայնքային բյուջեի բաշխմանը: Այս մոտեցումը նպաստում է տեղական ինքնակառավարման ավելի մեծ թափանցիկության և քաղաքացիական ներգրավվածության բարձրացմանը:

ՀՀ 2024թ. ***պետական բյուջեից այս 4 համայնքներին հատկացվել է 500 մլն դրամ, որի շրջանակներում իրականացվել է 8 ծրագիր: 2024թ. գործընթացին կամավոր միացել են ևս 17 համայնք: Ֆինանսավորման ծավալը պետական բյուջեում կրկնապատկվել է՝ դառնալով 1 մլրդ. դրամ և 2025թ. Կառավարության որոշմամբ պետական բյուջեից սուբվենցիոն կարգով աջակցություն է տրամադրվել 21 համայնքների, որի շրջանակներում իրականացվելու է 39 ծրագիր:***

Խորհրդատվական մարմիններ և աշխատանքային խմբեր
Հաշվի առնելով, որ ջրային ոլորտի կառավարումը ներառում է բազմաթիվ պետական մարմիններ, պարբերաբար ձևավորվում են միջգերատեսչական աշխատանքային խմբեր՝ կոնկրետ խնդիրներ լուծելու համար: Օրինակ՝ խմբեր են ստեղծվել ոլորտային ռազմավարություններ մշակելու կամ Ծակքար և Կարճաղբյուր գետերի մաքրման և վերականգնման աշխատանքները համակարգելու համար:

Բացի այդ՝ գործում են այնպիսի հանձնաժողովներ, ինչպես, օրինակ՝ Ազգային ջրային քաղաքականության երկխոսության (IWRM) ղեկավար կոմիտեն, որոնք նպաստում են ոլորտային քաղաքականության մշակմանը:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պաշտպանության փորձագիտական հանձնաժողովը միավորում է կառավարության ներկայացուցիչներին, գիտնականներին և ՀԿ-ներին՝ լճի պահպանության ջանքերը կենտրոնացնելու համար:

EU4Sevan ծրագրի միջոցով ստեղծվել է Սևանա լճի պահպանության հարթակ՝ շրջակա համայնքների մասնակցությունը խրախուսելու համար, որը տեղական ներգրավվածությունը շեշտադրող եզակի մոդել է[22]:

ՔՀԿ հարթակներ
Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի (ԱլԳ ՔՀՖ) Հայաստանի ազգային պլատֆորմի (ՀԱՊ) 3-րդ աշխատանքային խումբը կենտրոնացած է շրջակա միջավայրի, կլիմայի փոփոխության և էներգետիկ

[22] UNDP Armenia. https://www.undp.org/armenia/press-releases/responsible-sevan-3

անվտանգության վրա: Դրա նպատակն է ձևավորել ինտեգրված, կայուն քաղաքականություն, որը հավասարակշռում է ազգային շահերը և շրջակա միջավայրի պահպանությունը:

Ջրային ոլորտի հարցերը չեն քննարկվում որպես առանձին թեմաներ, այլ ներառվում են կլիմայի փոփոխության, էներգետիկայի և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ ավելի լայն քննարկումներում:

Աշխատանքային խումբը քննարկումներ է անցկացրել Հրազդան գետի և Երևանյան լճի աղտոտվածության խնդիրների վերաբերյալ, մշակել է առաջարկություններ և ներկայացրել կառավարությանը: Այնուամենայնիվ, դեռևս բացակայում են հարթակի մտահոգությունները լուծելու արդյունավետ մեխանիզմներ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացակարգեր
Համաձայն ՀՀ օրենսդրության, բոլոր շահագրգիռ կողմերը կարող են մասնակցել նախագծերի և ռազմավարական փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործընթացներին: Հետաքրքրված կողմերին խրախուսվում է արտահայտել իրենց կարծիքներն ու առաջարկությունները, այդ թվում՝ ջրային ոլորտի նախագծերի վերաբերյալ:

ՇՄԱԳ-ի և ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) ուղեցույցները հաստատվել են Շրջակա միջավայրի նախարարի կողմից և ուրվագծում են այս գործընթացներում շահագրգիռ կողմերի մասնակցության հստակ մեթոդներ:

Արդարադատության մատչելիություն
ՀՀ օրենսդրությունը պարտադրում է, որ Ջրօգտագործողների ընկերությունները ստեղծեն ներքին վեճերի լուծման հանձնաժողովներ, որոնք կազմված կլինեն առնվազն երեք անդամներից՝ իրենց ընկերությունների ներսում ծագող վեճերը լուծելու համար: Պատմականորեն գոյություն են ունեցել վեճերի լուծման մեխանիզմներ, ինչպիսիք են Ջրային ազգային խորհրդին կից վեճերի լուծման կոմիտեն և ջրօգտագործողների ընկերությունների շրջանակներում գործող նմանատիպ մարմինները: Ջրօգտագործողների ընկերությունների ներսում ծագած հակամարտությունները կառավարվել են համապատասխան կարգավորող հանձնաժողովների կողմից: Այնուամենայնիվ, 2019 թվականին Ջրային ազգային խորհրդի լուծարումից ի վեր ջրօգտագործման թույլտվությունների բնագավառում այլընտրանքային վեճերի լուծման մեխանիզմներ չեն ստեղծվել: Այս մեխանիզմների բացակայությունը մտահոգություն է առաջացնում, թե արդյոք վեճերը անտեսվում են կամ ոչ պատշաճ կերպով են լուծվում՝ խաթարելով ջրային կառավարման համակարգի թափանցիկությունը և վստահությունը:

Եզրակացություն
Ակնհայտ է, որ կան բազմաթիվ կառավարական և քաղաքացիական նախաձեռնություններ, որոնք նախատեսված են Հայաստանում տեղեկատվության հասանելիությունը և շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունմանը հանրության մասնակցությունը բարելավելու համար: Կան լավ հիմքեր

համակարգված կերպով ուսումնասիրելու, թե ինչպես են իրավահեն մոտեցման այս ընթացակարգային չափորոշիչները իրականում գործում: Երբ խոսքը վերաբերում է արդարադատության մատչելիությանը, անհրաժեշտ է ավելի շատ ջանքեր ներդնել՝ ջրային վեճերի արդյունավետ լուծում ապահովելու համար:

5. Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման հիմնական դերակատարներն ու նախաձեռնությունները

Հայաստանում ջրի իրավունքի իրականացմամբ զբաղվում են մի շարք ազգային հաստատություններ, տեղական կազմակերպություններ և միջազգային գործընկերներ: Նրանց աշխատանքը վերաբերում է ջրային իրավունքի երեք կարևորագույն ցուցանիշներին՝ մատչելիություն, հասանելիություն և որակ: Որոշ նախաձեռնություններ ներառում են բազմաթիվ չափորոշիչներ և մեծապես նպաստում են կլիմայի և ջրային ռեսուրսների կառավարմանը և, հետևաբար, ներկայացված են առանձին՝ «Այլ» բաժնում:

Հայաստանի ջրային ոլորտի հիմնական պետական մարմիններն են ՇՄՆ-ն և ՏԿԵՆը: ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը պատասխանատու է ջրային քաղաքականության սահմանման, ջրավազանային կառավարման պլանների մշակման և վերահսկման, ջրի քանակի և որակի մոնիթորինգի, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման համար: ՏԿԵՆ-ը մշակում և իրականացնում է պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման և անվտանգ օգտագործման ոլորտում Կառավարության քաղաքականությունը: ՏԿԵՆ համակարգման ոլորտում գտնվող Ջրային կոմիտեն հանդիսանում է պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման մարմինը: Այն նաև ունի ստորաբաժանումներ, որոնք պատասխանատու են էներգետիկայի և հանքարդյունաբերության ոլորտներում ջրօգտագործման նորմերի և ստանդարտների համար: Այս գործառույթներին վերաբերող տեղեկատվությունը հասանելի է ՏԿԵՆ-ի (www.mtad.am) և (www.scws.am/am) պաշտոնական կայքերում: Մարզային և համայնքային կառավարման մարմինների կայքերը նույնպես որոշակի տեղեկատվություն են տրամադրում ջրային ռեսուրսների վերաբերյալ:

Հասանելիություն

Ջրային ռեսուրսների կայուն հասանելիության ապահովումը մի շարք պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների կենտրոնական մտահոգության առարկա է:

2023 թվականին Հայաստանն ընդունեց երաշտի ծանրության գնահատման ստանդարտացված մեթոդ՝ հիմնված հիդրոթերմալ խոնավության գործակցի (HTC) վրա՝ օգտագործելով օդերևութաբանական կայաններից ստացված տվյալները: Համակարգը երաշտը դասակարգում է հինգ մակարդակների՝ թույլ տալով թիրախային միջոցներ ձեռնարկել տարբեր տարածաշրջաններում:

2023 թվականին գործարկվեց «Երաշտի կառավարման հայկական համայնք» հարթակը, որը միավորում է պետական մարմինները, քաղաքացիական հասարակությունը և համայնքները: Այն խթանում է տեղեկատվության փոխանակումը, նորարարական լուծումները և վաղ նախազգուշացման համակարգերը՝ հարցումների, քննարկումների, տեղեկագրերի և փորձագիտական փոխանակումների միջոցով: Այստեղ ներգրավված են նաև ուսանողները՝ որպես ապագա նորարարներ:[23]

Տեխնոլոգիական նորարարություններ. հեռահար զոնդավորումը, արհեստական բանականությունը, անօդաչու թռչող սարքերը և ԱՏՀ-ի վրա հիմնված մոդելները բարելավել են երաշտի մոնիթորինգը և կանխատեսումները: Բուսականության նորմալացված տարբերության ինդեքսի (NDVI) նման գործիքները օգնում են հայտնաբերել բույսերի սթրեսը, վերահսկել երաշտի ծանրությունը հիմնական գյուղատնտեսական գոտիներում և տեղեկացնել ռեսուրսների կառավարման ռազմավարությունների մասին:

ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) իրականացնում է լայնածավալ նախագծեր՝ այս մարտահրավերները լուծելու ուղղությամբ, ներառյալ՝

Ջրամբարի կառուցման նախագծեր.

- *Կապսի ջրամբար.* նպատակ ունի կառուցել 25 մլն մ³ ծավալով ջրամբար, որը հետագայում կարող է ընդլայնվել մինչև 60 մլն մ³, ապահովելով Շիրակի և Ախուրյանի ջրանցքների երկայնքով 17,000 հեկտար հողատարածքների ոռոգումը: Նախագծի օգնությամբ 2,280 հեկտարի վրա մեխանիկական ոռոգումը կփոխարինվի ինքնահոս ոռոգմամբ՝ տարեկան խնայելով 1,3 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա. կանոնավոր ոռոգման արդյունքում կավելանա գյուղատնտեսական մթերքների արտադրությունը:

- *Վեդիի ջրամբար.* ծրագրի նպատակն է բարելավել ջրային ռեսուրսների և ոռոգվող գյուղատնտեսության կայունությունը Արարատյան հարթավայրի բերրի հողերում, ապահովելով լրացուցիչ վերականգնվող ջրային ռեսուրսներ՝ Վեդու ջրամբարի կառուցման միջոցով և բարելավելով ոռոգման արդյունավետությունը՝ ցանցերի վերանորոգման և արդիականացման միջոցով, ինչպես նաև նվազեցնել հողերի լքվածությունը և աջակցել գյուղական վայրերում գյուղատնտեսական արտադրության բարձրացմանը:
- Մոնիթորինգի բարելավումներ.
    - Ջրային ռեսուրսների կառավարումը և մոնիթորինգը բարելավելու նպատակով վերահսկողական կառավարման և տվյալների հավաքագրման (SCADA) համակարգերի և նոր հիդրոլոգիական դիտարկման կետերի ներդրում:

Պետական ներդրումներից բացի, տեղական բանկերը աջակցում են գյուղատնտեսության արդիականացմանը: ArmSwissBank-ը ֆինանսավորել է բարձր

[23] IWRM ACTION HUB. https://iwrmactionhub.org/about

արդյունավետությամբ այգիների և գյուղական ջրամատակարարման արդիականացման նախագծեր, իսկ ACBA Bank-ը խթանում է կաթիլային ոռոգումը և կանաչ ենթակառուցվածքները՝ օգնելով գյուղացիներին խնայել ջուրը և անցնել կայուն գործելակերպերի:

Այս նախաձեռնությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ հետևյալ հղումներով՝ ArmSwissBank's projects[24] և ACBA Bank's drip irrigation support:[25]

ՇՄՆ-ն ղեկավարում է ջրային ռեսուրսների կառավարումը միջազգային բնապահպանական և մարդու իրավունքների չափանիշներին, այդ թվում՝ Օրհուսի կոնվենցիային և ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիային (ՄԱԿԿՇԿ) համապատասխանեցնելու ազգային ջանքերը: Քաղաքականության մշակման և ռազմավարական պլանավորման միջոցով ՇՄՆ-ն խթանում է Հայաստանի ջրային ռեսուրսների պահպանությունը և կայուն օգտագործումը:

ՇՄՆ-ի Ջրային ռեսուրսների կառավարման վարչությունը (ՋՌԿՎ) կարգավորում է ջրօգտագործումը և պաշտպանում ջրային ռեսուրսները՝ ապահովելով, որ արդյունահանումը մնա կայուն սահմաններում: ՋՌԿՎ-ն զբաղվում է նաև խոցելի բնակչության կարիքների աջակցությամբ:

Ջրային կոմիտեն (ՋԿ), որը գտնվում է ՏԿԵՆ-ի համակարգման ներքո, կառավարում է ջրի բաշխման համակարգերը, որոնք կարևոր են հատկապես գյուղատնտեսական ոռոգման համար: Մշակելով հավասար բաշխման համակարգեր՝ ՋԿ-ն փորձում է լուծել տարածաշրջանային անհավասարությունները և աջակցել սակավաջուր գոտիների դիմակայունությանը: Ջրային կոմիտեն առաջնահերթություն է տալիս գյուղական ջրամատակարարման և սանիտարական պայմանների (ՋՋԾ) բարելավմանը՝ ենթակառուցվածքային բացթողումները լրացնելու, ծառայությունների որակը բարելավելու և ամբողջ երկրում հավասարությունը խթանելու համար:

«Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրվող հիդրոլոգիական տվյալները կենսական նշանակություն ունեն ոլորտում աշխատանքների պլանավորման համար: Վերահսկելով եղանակային օրինաչափությունները, երաշտները և ջրի մակարդակը՝ կենտրոնն աջակցում է ջրի մատչելիության վերաբերյալ տեղեկացված որոշումների կայացմանը:

Միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են Համաշխարհային բանկը, Վերականգնման վարկերի բանկը(ՎՎԿ/KFW), ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ/UNDP) և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամը (ԳԷՀ/GEF) , ցուցաբերում են

[24] Ինտենսիվ այգի Ալափարսում, ArmSwissBank. https://armswissbank.am/bank-projects/projects/2388/?lang_ui=en
[25] Ոռոգման ժամանակակից համակարգերի ներդրման վարկեր, ACBA Bank. https://www.acba.am/en/farmers/agro-subsidy-programs/drip-irrigation-systems

տեխնիկական աջակցություն և ֆինանսավորում են կարողությունների զարգացման և կայուն ջրային ռեսուրսների կառավարման նախագծերը՝ շեշտը դնելով ներառական զարգացման վրա և բացառելով որևէ համայնքի անտեսումը:

Հասանելիություն

Ջրի հասանելիությունը Հայաստանում կախված է պետական մարմինների, մասնավոր ընկերությունների և համայնքային կազմակերպությունների համակարգված ջանքերից:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (ՏԿԵՆ), Շրջակա միջավայրի, Ներքին գործերի (ՆԳՆ) նախարարությունները հիմնական կառավարական մարմիններն են, որոնք պատասխանատու են համայնքներին բավարար ջրամատակարարման հասանելիություն ապահովելու համար:

«Ջրառ» ՓԲԸ-ն ծառայում է որպես ոռոգման ջրի մեծածախ մատակարար:

Գործելով տեղում՝ Ջրօգտագործողների ընկերությունները (ՋՕԸ) կարևոր դեր են խաղում, և լինելով իրավաբանորեն անկախ, բայց կառավարության կողմից համակարգվող ընկերություններ, դրանք ոռոգման ջուրը բաշխում են վերջնական օգտագործողներին, հատկապես գյուղական շրջաններում: Տեղական համայնքների կողմից կառավարվող 15 ընկերությունները ապահովում են, որ ջուրը հասնի գյուղացիներին երկրորդային և երրորդային ոռոգման համակարգերի միջոցով:

Մասնավոր հատվածը, մասնավորապես «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն, նույնպես նպաստում է խմելու ջրիամատակարարման համակարգերի կառավարմանը՝ ընդլայնելով անվտանգ ջրային ծառայությունների հասանելիությունը տնային տնտեսություններին և գործարարներին:

Համայնքները շարունակում են աջակցել ջրի հասանելիությանը՝ համագործակցելով ազգային իշխանությունների հետ՝ ենթակառուցվածքները պահպանելու և համայնքի ներգրավվածությանը աջակցելու համար:

Որակ

Հայաստանի ջրային ռեսուրսների պաշտպանությունը և որակի բարելավումը կարևորագույն նշանակություն ունի անվտանգ և մաքուր ջրի իրավունքի ապահովման համար:

Ջրի և կլիմայի մոնիթորինգը վերահսկվում է «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից, որն իրականացնում է մակերևութային և ստորգետնյա ջրերի որակի, օդերևութաբանության և էկոհամակարգերի փոփոխությունների որակական և քանակական մոնիթորինգ՝ տվյալներ տրամադրելով իր կայքի, բջջային հավելվածի և սոցիալական ցանցերի միջոցով, նպաստելով տեղեկատվությունը հանրությանը, այդ թվում՝ բարձր խոցելիության խմբերին հասանելի դարձնելուն:

ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ը համակարգված կերպով մոնիթորինգ է իրականացնում երկրի մակերևութային և ստորգետնյա ջրային ռեսուրսների որակի

նկատմամբ: Իր 91 հիդրոլոգիական կայանների ցանցի միջոցով այն տվյալներ է հավաքում ջրի տարբեր պարամետրերի՝ մակարդակի, ջերմաստիճանի և աղտոտիչների վերաբերյալ: Կենտրոնի ամսական և եռամսյակային հաշվետվությունները տեղեկատվություն են տրամադրում ջրային ռեսուրսների կառավարման և երաշտի մեղմացման ուղղությամբ կառավարության գործողությունների վերաբերյալ:

Առողջապահության ոլորտի լաբորատորիաների հիմնական մարտահրավերը ջրի որակի ստուգման արդյունքների հուսալիությունը, ճշգրտությունը ժամանակին ապահովելն է: Լաբորատորիաներում որակի կառավարման համակարգի ներդրումը կարևոր է հուսալի տվյալներ տրամադրելու համար: «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի լաբորատորիայի հավատարմագրումը կարևոր քայլ էր Հայաստանում ջրի որակի մոնիթորինգի բարելավման ուղղությամբ:

Ջրի որակի մոնիթորինգի հզորացման և հանրային առողջության պահպանության նպատակով անհրաժեշտ է որակի ապահովման և որակի վերահսկման (QA/QC) ամուր համակարգի ստեղծումը:

Բացի այդ՝ վերահսկում է սուբվենցիոն ծրագրերը, որոնք ֆինանսավորում են տեղական ինքնակառավարման մարմինների ենթակառուցվածքային նախագծերը, այդ թվում՝ խմելու ջրի համակարգերի բարելավումները:

Կայուն զարգացման 6-րդ նպատակի (ԿԶՆ 6) միջգերատեսչական աշխատանքային խումբը, որը գլխավորում են ազգային իշխանությունները, հետևում է Հայաստանի առաջընթացին՝ անվտանգ ջրի և սանիտարական պայմանների համընդհանուր հասանելիության ապահովման ուղղությամբ: Այս խումբը զեկույցներ է պատրաստում ՄԱԿ-ի ջրային ռեսուրսների և Շրջակա միջավայրի ծրագրի գրասենյակների համար՝ օգնելով համապատասխանեցնել ջրի որակի ազգային ջանքերը միջազգային նպատակներին, ինչպիսին է ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարումը:

Քաղաքացիական հասարակությունը նույնպես կարևոր դեր է խաղում: Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային հարթակը հանդես է գալիս ջրային ռեսուրսների պահպանության օրենսդրական շրջանակների ուժեղացման ծրագրերով, խթանում է ՀՀ շրջակա միջավայրի համապատասխանեցումը Եվրոպական Միության չափորոշիչներին և խրախուսում է հանրության մասնակցությունը ջրի որակի կառավարման աշխատանքներին:

Ջրային ռեսուրսների կառավարմանը նպաստող այլ ներդրումներ

2016-2018 թվականներին «ԷկոԼուր» ՀԿ-ն իրականացրել է «Աջակցություն նոր բարեփոխումներին փոքր ՀԷԿ-երի բնագավառում ՔՀԿ կառավարություն երկխոսության միջոցով» նախագիծը: Ստեղծվել է աշխատանքային խումբ՝ քաղաքացիական հասարակության և բնապահպանության նախարարության (այժմ՝ շրջակա միջավայրի նախարարություն) միջև փոքր ՀԷԿ-երի վերաբերյալ երկխոսությունը խթանելու համար: «ԷկոԼուր» ՀԿ-ի նախագահ Ինգա Զարաֆյանը

նաև առաջարկել է վարչապետի աշխատակազմին կից ստեղծել խորհուրդ՝ փոքր հէկ-երի հարցերով շահագրգիռ տարբեր կողմերի մասնակցությամբ:

Մի շարք դերակատարներ մեծապես նպաստում են կլիմայի և ջրային ռեսուրսների կառավարմանը՝ ամրապնդելով ջրային իրավունքների իրականացման ընդհանուր շրջանակը.

- Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը կենսական նշանակություն ունի կլիմայի փոփոխություններից տուժած համայնքների, այդ թվում՝ սակավաջուր համայնքների բնակիչների իրավունքների պաշտպանության համար: Առաջարկվող նախաձեռնությունները, ինչպիսին է Ջրային միջնորդության մեխանիզմը, կարող են բարելավել իրավունքների վրա հիմնված ջրային կառավարումը:
- Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) փրկարար ծառայությունը աշխատում է վաղ նախազգուշացման համակարգերի բարելավման ուղղությամբ՝ համայնքներին կլիմայական պայմանների հետ կապված ջրային ռիսկերի, այդ թվում՝ ջրհեղեղների և երաշտների մասին տեղեկացնելու համար՝ ինտեգրելով SMS-ների և աշխարհագրական թիրախավորման այլ տեխնոլոգիաներ:
- Համագործակցություն է իրականացվում այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակը (UNDRR), Գլոբալ ջրային գործընկերությունը (GWP) և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան, ուղղված Հայաստանի արտակարգ իրավիճակներին արձագանքման ռազմավարությունների բարելավմանը:
- Քաղաքականության մակարդակում Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ(ԱՌՆԱՊ) աջակցում է աղետների նկատմամբ դիմակայունության բարձրացմանը Հայաստանում, այդ թվում՝ Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի շրջանակի իրականացման միջոցով: ARNAP-ը նպաստում է քաղաքականության մշակմանը, ռիսկի գործոնների վերաբերյալ կրթությանը, գենդերային ներառականության ընդլայնմանը և համայնքային այլ նախաձեռնություններին:
- Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնը (NCDC) պաշտպանում է բնակչության առողջությունը՝ իրականացնելով ջրային ոլորտի հիվանդությունների մոնիթորինգ և արագ արձագանքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կլիմայի փոփոխությունները ազդում են ջրային աղբյուրների վրա:
- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը աջակցում է դիմակայունության ամրապնդմանը՝ դպրոցական ծրագրերում ներառելով աղետների ռիսկի նվազեցման կայուն ջրօգտագործման վերաբերյալ ուսուցողական նյութեր:
- Արդարադատության նախարարությունը բարելավում է հանրության հասանելիությունը տեղեկատվությանը, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները և Օրհուս կենտրոնները նպաստում են համայնքի ներգրավվածությանը և մասնակցությանը ջրային կառավարման աշխատանքներին:

- Բաց կառավարման գործընկերությունը և «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն խթանում են ջրային և շրջակա միջավայրի կառավարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:
- Համաշխարհային բանկի, Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԿ/KFW), EU4Environment-ի և մասնավոր ֆինանսական հաստատությունների հետ գործընկերությունները շատ կարևոր են ջրային ենթակառուցվածքների բարելավման, այդ թվում՝ ոռոգման համակարգերի և սանիտարական պայմանների ֆինանսավորման համար:
- Ակադեմիական հաստատությունները, ինչպիսիք են ԵՊՀ էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը, ապահովում են էկոլոգիական արդարադատության և կլիմայական իրավունքների վերաբերյալ ուսուցում և հետազոտական աջակցություն:
- Առաջարկվում է համայնքների դիմակայունության ամրապնդման նպատակով մշակել «Երաշտի և ջրհեղեղի ազգային արձագանքման ծրագիր» ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակի, «Գլոբալ ջրային գործընկերության», ՀՀ ոստիկանության կրթահամալիրի և այլ կազմակերպությունների կողմից :
- Ազգային նախաձեռնությունները, ինչպիսին է 2018–2020 թվականների գործողությունների ծրագիրը, նպատակ ունեն բարելավել ջրի հավասար հասանելիությունը, մասնավորապես՝ մարգինալացված խմբերի համար՝ բացահայտելով օրենսդրական խոչընդոտները և թերսպասարկվող համայնքները:
- Նախագծերը հաճախ ուղղված են կանանց, երեխաների, տարեցների, տեղահանված և հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: Ծրագրերի նախագծման մեջ շեշտադրվում են հատկապես գենդերային մոտեցումները:

6. Եզրակացություններ և առաջարկություններ

Քանի որ Հայաստանը բախվում է փոփոխվող կլիմայի բարդ մարտահրավերներին, ջրային ռեսուրսների կառավարումը գտնվում է հարմարվողականության հրամայականների առաջնագծում: Միջազգային իրավունքում ջրի իրավունքը ներառում է երեք կարևորագույն ցուցանիշներ՝ մատչելիություն, հասանելիություն և որակ, որոնք սկզբունքային շրջանակ են ապահովում կլիմայական արդյունավետ արձագանքների ձևավորման համար:

Հայաստանում ջրի մատչելիությունը ոչ միայն բնապահպանական մտահոգություն է, այլև մարդու իրավունքների պարտավորություն, ջրային ռեսուրսների կայուն պահպանման և կառավարման հրամայական, քանի որ մտահոգիչ ծավալների են հասնում չափազանց մեծ արդյունահանումը, անարդյունավետ ենթակառուց-վածքները և փոփոխվող հիդրոլոգիական կառուցվածքները: Խմելու, գյուղատնտեսության և էկոհամակարգերի համար հուսալի ջրամատակարարման ապահովումը պահանջում է ավելին, քան տեխնիկական լուծումներն են. այն պահանջում է համահունչ տեսլական, որը հարգում է բոլորի արժանապատվությունն ու իրավունքները:

Հասանելիությունը նույնպես պետք է հասկանալ ոչ միայն ֆիզիկական կամ տնտեսական հասանելիության, այլև դրա ավելի լայն սոցիալական և ինստիտուցիոնալ չափանիշների տեսանկյունից: Հանրության մասնակցությունը ջրային որոշումների կայացմանը, ժամանակին և մատչելի տեղեկատվության տարածումը, ինչպես նաև ինստիտուցիոնալ և աշխարհագրական խոչընդոտների վերացումը կարևոր են, որ բոլոր անհատները, մասնավորապես՝ գյուղական վայրերում բնակվողները, կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք և այլ մարգինալացված խմբեր, կարողանան իրականացնել իրենց ջրի իրավունքը: Առանց նման ներառման՝ հարմարվողականության ջանքերը կարող են խորացնել առկա անհավասարությունները:

Ջրի որակը գտնվում է շրջակա միջավայրի պահպանության և հանրային առողջության պահպանման խաչմերուկում: Կլիմայի փոփոխությունը սրում է աղտոտման, գերծանրաբեռնված մաքրման համակարգերի և քայքայվող ենթակառուցվածքների ռիսկը: Անվտանգ ջրի ապահովումը պահանջում է ուժեղ մոնիթորինգ, թափանցիկություն և ինստիտուցիոնալ կարողություններ՝ ռիսկերի վերահսկողության նկատմամբ, նախքան դրանք կվերածվեն ճգնաժամերի:

Կարևոր է նշել, որ կլիմայի փոփոխության հարմարվողականության իրավահեն մոտեցումը պահանջում է ոչ միայն նվազագույն չափորոշիչների ապահովում, այլև խտրական խոչընդոտների նախաձեռնողական բացահայտում և վերացում: Խտրականության դեմ պայքարի սկզբունքը պահանջում է, որ հարմարվողականության միջոցառումները չանտեսեն Հայաստանի բնակչության տարբեր շերտերը: Քաղաքականությունները պետք է մշակվեն տարբեր խմբերի խոցելիությունների նկատմամբ զգայունությամբ և մշակվեն այնպես, որ բոլորի համար ապահովվեն հավասար և արժանապատիվ հնարավորություններ:

Այս անցումային պահին Հայաստանը հնարավորություն ունի մարդու իրավունքները ներառել կլիմայի փոփոխության հարմարվողականության օրակարգում: Դրանով ոչ միայն ժողովուրդը կպաշտպանվի կլիմայի փոփոխության ամենավատ հետևանքներից, այլև կբարելավեն ժողովրդավարական կառավարումը, սոցիալական համախմբվածությունը և գալիք սերունդների դիմակայունությունը:

Հիմնվելով այս զեկույցի մշակման ընթացքում քննարկված բոլոր կետերի վրա՝ առանձնացնում ենք հետևյալ առաջարկությունները.

Հասանելիություն, մատչելիություն, որակ

- Հասանելիություն և մատչելիություն
    - Ներդրումներ կատարել գյուղական և թերսպասարկվող տարածքների ջրամատակարարման ենթակառուցվածքներում՝ կենտրոնանալով գենդերային հասանելիության վրա (հատկապես ջրի համար պատասխանատու կանանց համար):
    - Ուսումնասիրել փոքր ֆերմերային տնտեսությունների և մարգինալ խմբերի անձանց համար ջրի մատչելիության բարելավման միջոցառումների հնարավորությունը:

    - Խրախուսել այլընտրանքային կենսամիջոցներ՝ ջրային ռեսուրսներից կախվածությունը նվազեցնելու նպատակով (օրինակ՝ կայուն գյուղատնտեսություն, վերականգնվող էներգիա):
    - Նվազեցնել սակավաջրության մակարդակը՝ ներդրումներ կատարելով ջրի խնայողության և արդյունավետության բարձրացման ուղղությամբ. ջրի կուտակում, ընդլայնված ոռոգում, արդյունավետ փոխադրման համակարգեր և խելացի տեխնոլոգիաներ:
    - Ներդնել թվային մոնիթորինգի իրականացման և հաշվետվությունների կազմման համակարգեր:
    - Ներդնել ջրային կառավարման խելացի տեխնոլոգիաներ, մասնավորապես՝ գյուղատնտեսության և քաղաքային ջրամատակարարման համակարգերում:
    - Ներդնել ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման արդյունավետ համակարգեր:
    - Փորձնական ծրագրեր Արարատյան դաշտավայրում ոռոգման նպատակով մաքրված կեղտաջրերի վերօգտագործման համար:
    - Վերականգնել և ամրացնել գետերի ափերը՝ օգտագործելով բնահեն լուծումներ:
    - Պահպանել և կառավարել Արարատյան արտեզյան ավազանը և գետային էկոհամակարգերը:
    - Բարելավել գետավազանային կառավարման պլանները և դրանց իրականացումը՝ արդեն իսկ գոյություն ունեցողների օրինակով (օրինակ՝ Արարատյան գետավազանի կառավարման պլան):
- Որակ
    - Բարելավել ջրի որակի մոնիթորինգի համակարգերը, ընդլայնել մոնիթորինգի ցանցը:
    - Ապահովել խմելու և ոռոգման ջրի կանոնավոր ստուգումները:
    - Հագեցնել և հավատարմագրել լաբորատորիաները՝ համապատաս-խանեցնելով դրանք միջազգային չափորոշիչներին:
    - Բարելավել ջրի որակի վերաբերյալ տվյալների հասանելիությունը և թափանցիկությունը:
    - Քաղաքային բնակավայրերն ապահովել մեխանիկական և կենսաբանական կեղտաջրերի մաքրման կայաններով:
    - Ներդնել գյուղական թափոնների կառավարման համակարգեր:

Տեղեկատվության հասանելիություն, հանրության մասնակցություն և արդարադատության մատչելիություն

- Տեղեկատվություն
    - Ապահովել պետական մարմինների կողմից տվյալների տրամադրումը բաց հարթակների միջոցով:
    - Մշակել ինտերակտիվ գործիքներ (օրինակ՝ բջջային հավելվածներ, թվային

քարտեզներ)՝ ջրային տեղեկատվությանը հանրության հասանելիությունն ապահովելու համար։
    - Բարելավել հաղորդակցությունն ու իրազեկությունը՝ դրանք դարձնելով մատչելի և հանրամատչելի։
    - Բարելավել «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի հավելվածը՝ ժամանակին թարմացված տվյալներով և մատչելի գործառույթներով։
    - Դպրոցական ուսումնական ծրագրերում (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ղեկավարությամբ) ներմուծել աղետների ռիսկի նվազեցման, սակավաջրության վերաբերյալ ուսուցողական նյութեր։
    - Կազմակերպել իրազեկման արշավներ ջրի անվտանգ օգտագործման և պահպանման վերաբերյալ։
    - Տարածել մատչելի տեղեկատվություն խոցելի բնակչության շրջանում ջրի որակի և ռիսկերի վերաբերյալ։
    - Մշակել արտակարգ իրավիճակների վերաբերյալ ազգային տեղեկատվական ռազմավարություն։
    - Բարելավել վաղ նախազգուշացման համակարգերը (SMS, ռադիոազդանշաններ, էլ. փոստ, աշխարհագրական թիրախավորում)։
    - Միավորել ոստիկանության, միգրացիոն և փրկարարական ծառայությունների արտակարգ իրավիճակների տեղեկատվական կենտրոնները։

- Մասնակցություն
    - Վերականգնել նախարարություններին կից հանրային խորհուրդները՝ վերահսկողությունը և մասնակցային որոշումների կայացումը բարելավելու նպատակով։
    - Ապահովել դրանց կանոնավոր աշխատանքը և շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը։
    - Ընդլայնել համայնքների դերը որոշումների կայացման գործընթացում՝ հանրային լսումների և Բաց կառավարման գործընկերության հարթակի նման մեխանիզմների միջոցով։
    - Ջրային ռեսուրսների կառավարման և տեղեկատվության հասանելիության ոլորտում հաշմանդամություն ունեցող և բարձր խոցելիության այլ խմբերի անձանց ներգրավման հավասար պայմաններ ապահովել։
    - Խթանել ներառական ջրային կառավարումը և ընդլայնել կանանց դերը ջրային ռեսուրսների կառավարման մեջ։
    - Իրականացնել իրազեկման և կրթական ծրագրեր՝ համագործակցելով ՀԿ-ների, դպրոցների և տեղական խմբերի հետ։

- Արդարադատության մատչելիություն
    - Վերականգնել կամ բարեփոխել 2019 թվականից հետո լուծարված վեճերի լուծման մեխանիզմները, այդ թվում՝ Վեճերի լուծման հանձնաժողովը։
    - Ներդնել հաշտարարության ինստիտուտ կամ էկոլոգիական խնդիրներով մարդու իրավունքների պաշտպան։

- Ապահովել նոր մեխանիզմների անկախ կառավարումը և ֆինանսավորումը՝ անաչառությունը երաշխավորելու համար։
- Համապատասխանեցնել բարեփոխումները Օրհուսի կոնվենցիայի՝ արդարադատության մատչելիելիության և շրջակա միջավայրի հարցերում հանրության մասնակցության վերաբերյալ դրույթներին։
- Ջրօգտագործողների ընկերությունների շրջանակներում ստեղծել ջրային վեճերի լուծման իրատեսական ու գործուն մարմիններ։
- Ապահովել ջրօգտագործման թույլտվությունների ոլորտի վեճերի արդյունավետ լուծում։

Կառավարման համակարգեր և կառուցվածքներ

- Օրենք և քաղաքականություն
  - 2025 թ. և հետագա տարիների համար նախատեսված Ազգային հարմարվողականության ծրագրում (NAP) ներառել մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումները։
  - Ամրապնդել ջրի իրավունքի ապահովման իրավական շրջանակները։
  - Իրականացնել ջրի վերօգտագործման պրակտիկան խթանող օրենսդրական փոփոխություններ։
  - Վերանայել և բարելավել մաքրված կեղտաջրերի չափորոշիչները։
  - Մշակել ջրհեղեղների ռիսկի կառավարման և երաշտների դեպքում արտակարգ իրավիճակների պլաններ։
  - Խստացնել ձեռնարկությունների կողմից կեղտաջրերի արտանետման կարգավորումը և վերահսկողությունը։
  - Ամրապնդել միջոլորտային համագործակցությունը պետական մարմինների, ՀԿ-ների, ակադեմիական կազմակերպությունների և միջազգային գործընկերների միջև։
  - Լիարժեք հստակեցնել համակարգման պատասխանատվության բաշխումը Շրջակա միջավայրի նախարարության և մյուս լիազոր մարմինների միջև։
  - Հաղթահարել տեղահանման ռիսկը և գյուղից քաղաք միգրացիան՝ որպես կլիմայի հարմարվողականության և աղետների ռիսկի նվազեցման ավելի լայն միջոցառումների մաս։
  - Խստացնել պահանջները մարդու իրավունքների վրա ազդեցության գնահատումներ ՇՄԱԳ/ՇՄԳ պահանջող նախագծերում, հատկապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հանքարդյունաբերությունը և էներգետիկան։
- Տվյալներ
  - Աջակցել մասնակցային հետազոտություններին՝ բարձր խոցելիության խմբերի անձանց հատուկ փորձի վերաբերյալ պատկերացումները բարելավելու համար։
- Բյուջեներ, ռեսուրսներ և կարողություններ
  - Աջակցել Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ինստիտուտին՝ մասնավոր հատվածի ներդրումները խրախուսելու նպատակով։

- Բարձրացնել պետական – մասնավոր գործընկերությունների դերը։
- Լուծել մասնագետների պակասը՝ նպատակային ուսումնական ծրագրերի միջոցով։
- Զարգացնել ջրային ռեսուրսների կառավարման կազմակերպությունների կարողությունները՝ ջրի որակի համակարգեր ներդնելու, շահագործելու և վերահսկելու նպատակով։
- Ստեղծել ջրային ռեսուրսների կառավարման մասնագիտական ուսումնական կենտրոն։
- Լուծել ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում կադրերի բարձր արտահոսքի և փորձագետների պակասի բացերը։
- Բարեփոխել կրթական ծրագրերը՝ իրականացնելով շրջակա միջավայրի և ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ վերապատրաստումներ։
- Ընդլայնել համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ՝ մեթոդաբանությունների ներմուծման և լավագույն փորձի կիրառման նպատակով։

Այլ նախաձեռնություններ

Standardized Drought Assessment (HTC) – Right to Information: Enables evidence-based decision-making.
https://www.droughtmanagement.info/portal/wp-content/uploads/2022/08/Armenia-IDMP-Final-Report-June-2022.pdf?utm
2022–2026 Adaptation Program – Right to Water: Aims to secure water availability amid climate change. https://nature-ic.am/en/news/ra-government-has-approved-the-%222022-2026-climate-change-adaptation-plan-in-the-water-resources-sector%22?utm
AI, UAVs, GIS Monitoring – Right to Science and Development Benefits: Promotes efficient, inclusive planning. https://www.researchgate.net/publication/346322417_UAV-Derived_Data_Application_for_Environmental_Monitoring_of_the_Coastal_Area_of_Lake_Sevan_Armenia_with_a_Changing_Water_Level
Drought Community of Practice – Right to Participation: Engages stakeholders, including vulnerable groups. https://www.gwp.org/en/About/more/news/2023/drought-in-armenia--community-of-practice-as-a-step-towards-integrated-drought-management/?utm
Kaps & Vedi Reservoirs – Right to Livelihood: Supports rural agriculture and reduces energy use. https://armenpress.am/en/article/1111189?utm_ ,
Green Financing by Banks – Right to Development: Enables access to water-saving technologies for farmers. https://www.worldbank.org/en/news/press-release/2024/03/06/fourth-green-armenia-platform-policy-dialogue
ArmHydromet Data Platforms – Right to Access Information: Publicly shares real-time climate/water data. https://aarhusclearinghouse.unece.org/resources/armenia-weather-forecasts-and-environmental-monitoring-information-mobile-application?utm
Civic Initiatives (e.g., EcoLur) – Right to Participation and Accountability: Empowers civil society in water governance. https://www.ecolur.org/en/?utm